




Հաստատված է Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու
19.08. 2022 թվականի N 129-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ 2022-2026ԹԹ..

Մշակել է՝ համայնքի ղեկավար Ա. Ոսկանյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու _____ թիվ _____ որոշմամբ

ԱՐԹԻԿ 2022





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....	Error! Bookmark not defined.....
2.Համայնքի իրավիճակի նկարագրություն	Error! Bookmark not defined.
.....	5
2.1.Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	5
2.2.Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը	9
2.3. 2022 թվականին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում իրականացվող ծրագրերը և 2023 թվականին կանխատեսվող ծրագրերը	11
2.4. Պատվիրակված ծառայություններ	12
2.5.Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները	29
2.6.Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	33
2.7.Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն	37
3.Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	50
3.1.Համայնքի զարգացման տեսլական	50
3.2.Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	54
3.3.Համայնքի ՀՀԶԾ-ի ծրագրերի ցանկ (ըստ ոլորտների)	60
3. 4.Համայնքի գույքի (շենքերի, շինությունների, հողամասերի և այլն) կառավարման հնգամյա ծրագիր	67
4.ՀՀԶԾ ֆինանսավորման պլանը.....	73
5.ՀՀԶԾ մոնիթորինգի պլանը	100



1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

Համայնքի հարգելի՛ բնակիչներ, Արթիկ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակելիս մենք առաջնորդվել ենք այն հանգամանքով, որ այս բարդ և փոփոխվող իրականության մեջ համայնքի ապագան այնպես պետք է ծրագրավորվի, որ իր մեջ ներառի թե՛ տեղի ժողովրդին, թե՛ շահագրգիռ անձանց, թե՛ համայնքապետարանի ամբողջ անձնակազմը և վարչական կենտրոնների պատասխանատուներին:

Համայնքապետարանը, որպես ժողովրդին հաշվետու կառույց, պետք է մշակի և մատուցի այնպիսի ծառայություններ, որոնք արդյունավետորեն կիրականացնեն տեղի բնակչության կարիքների սպասարկումը, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ քաղաքացիներն ունեն աճող ակնկալիքներ համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայությունների որակի և համապատասխանության վերաբերյալ:

Որպեսզի համայնքապետարանն արձագանքի քաղաքացիների կարիքներին և արդի մարտահրավերներին, կարևոր է, որ մշակվեն նոր մոտեցումներ համայնքի ուղին պլանավորելու համար: Այս մոտեցումը կոչվում է համայնքի ռազմավարական պլանավորում:

Արթիկ համայնքի զարգացման տեսլականի կենտրոնում համայնքի բնակիչն է, նրա կյանքի որակի բարելավումը, արժանապատիվ կյանքի համար բավարար պայմանների ստեղծումն ու ապահովումը:

Արթիկ համայնքն իր բնակավայրերով ունի ձևավորված ավանդույթներ, դիմագիծ և բնութագիր: Դրա հետ մեկտեղ անժխտելի է արդի կյանքին ու աշխարհին ներդաշնակ ու համահունչ քայլելու հրամայականը:

Կոչված լինելով ապահովելու համայնքի համաչափ և կայուն զարգացումը՝ նշված ծրագրերն ապահովելու են համայնքային տնտեսության կառավարման առավելագույն արդյունավետությունը՝ կիրառելով առկա առաջատար փորձը, նորարարական լուծումներ տալով համայնքային խնդիրներին, ստեղծելով բարենպաստ միջավայր և՛ բնակիչների, և՛ համայնքում ներդրումներ անելու ցանկություն ունեցող անձանց համար:

Ամփոփելով վերը նշվածը, համոզված եմ, որ Արթիկ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը ծառայելու է իր նպատակին՝ նպաստելով համայնքի համաչափ զարգացմանը և ուղենիշ դառնալով բնակչության սոցիալ-տնտեսական կարիքների բավարարման համար:

Արթիկ համայնքի ղեկավար՝ Անանիկ Ոսկանյան



2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2017 թվականի հունիսի 9-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Արթիկի տարածաշրջանի 24 համայնքների միավորման արդյունքում ձևավորվեց Արթիկ բազմաբնակավայր համայնքը:

Արթիկ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի մասին ամփոփ տեղեկատվությունը (վարչական տարածքը, հաշվառված բնակչության թիվը, տնային տնտեսությունների թվաքանակը, հեռավորությունը համայնքի կենտրոնից) բերված է **աղյուսակ 1-ում**:

Համայնքի կենտրոնը Արթիկ քաղաքն է:

Աղյուսակ 1. Ամփոփ տեղեկատվություն համայնքի բնակավայրերի մասին (առ 01.01.2022թ. դրությամբ)

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Վարչական տարածքը (հա)	Հաշվառված բնակչության թիվը (մարդ)	Տնային տնտեսությունների թվաքանակը	Հեռավորությունը համայնքի կենտրոնից
1.	Արթիկ	3750.73	19805	5531	0
2.	Անուշավան	1134.52	2143	470	4
3.	Արևշատ	2486.79	1914	672	10
4.	Գեղանիստ	1287.37	1263	285	13
5.	Գետափ	701.49	909	195	6
6.	Լեռնակերտ	3220.83	1415	315	11
7.	Լուսակերտ	663.94	649	185	12
8.	Հայկասար	589.89	220	38	10

9.	Հայրենյաց	1422.41	755	242	13
10.	Հառիճ	4454.47	1160	280	3
11.	Հոռոմ	3007.07	2064	456	10
12.	Հովտաշեն	388.92	299	91	10
13.	Մեծ Մանթաշ	6236.99	2455	606	11
14.	Մեղրաշեն	1588.08	1248	240	8
15.	Նահապետավան	1409.67	797	216	5
16.	Նոր Կյանք	1275.12	1562	384	6
17.	Պեմզաշեն	2873.50	3133	790	7
18.	Սարալանջ	2612.29	1295	350	4
19.	Սարատակ	1032.92	1470	330	11
20.	Սպանդարյան	866.35	1620	372	7
21.	Վարդաքար	945.33	696	240	7
22.	Տուֆաշեն	1173.84	423	113	9
23.	Փանիկ	1784.68	2927	797	7
24.	Փոքր Մանթաշ	3634.75	2984	760	10
Ընդամենը		48541.96	53206	13958	194

Հայաստանի Հանրապետության ոստիկանության և անձնագրային ու վիզաների վարչության տրամադրած տվյալների համաձայն՝ 2022 թվականի փետրվարի 25-ի դրությամբ՝ համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 53206 մարդ, այդ թվում արական՝ 26661 և իգական՝ 26545: Ըստ բնակավայրերի, համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմի վերաբերյալ տեղեկատվությունը բերված է **աղյուսակ 2-ում**:



Աղյուսակ 2. Տեղեկատվություն համայնքի առկա բնակչության տարիքային, սոցիալական կազմի և զբաղվածության վերաբերյալ
(01.01.2022 թ. դրությամբ)



Հ/Հ	Բնակավայրը	Բնակչության թիվը			0-6 տարեկան բնակչության թիվը			7-18 տարեկան բնակչության թիվը			19-63 տարեկան բնակչության թիվը			63-ից բարձր տարեկան բնակչության թիվը			Կենսաթոշակ առու	Փախստակ.	Հաշմանդամ	Գրանցված զոռոճառուի /սեզոնային/ աշխատանքի մեկնողներ	Զբաղվածներ	
		Արական	Իգական	Ընդամենը	Արական	Իգական	Ընդամենը	Արական	Իգական	Ընդամենը	Արական	Իգական	Ընդամենը	Արական	Իգական	Ընդամենը						
1.	Արթիկ	9658	10140	19798	614	571	1185	1685	1441	3126	6213	6295	12508	1146	1831	2977	3758	125	1300	354	3150	5200
2.	Անուշավան	1064	1079	2143	90	78	168	163	68	231	659	610	1269	120	167	287	358	2	25	0	400	202
3.	Արևշատ	955	959	1914	132	140	272	280	290	570	425	409	834	116	122	238	150	0	28	0	150	350
4.	Գեղանիստ	665	598	1263	67	52	119	112	109	221	359	415	774	72	77	149	126	0	25	12	230	97
5.	Գետափ	439	470	909	29	25	54	60	84	144	287	304	591	64	56	120	84	0	12	35	130	135
6.	Լեռնակերտ	739	676	1415	63	54	117	103	109	212	524	450	974	49	63	112	182	0	70	10	300	60
7.	Լուսակերտ	328	321	649	22	26	48	53	29	82	231	203	434	33	51	84	94	0	4	0	89	399
8.	Հայկասար	118	102	220	12	13	25	17	17	34	84	59	143	5	13	18	16	2	6	4	22	83
9.	Հայրենյաց	391	364	755	30	24	54	71	55	126	255	231	486	40	59	89	82	0	22	0	180	40
10.	Հադիճ	596	564	1160	38	51	89	105	87	192	370	335	711	99	75	174	158	3	35	155	190	850
11.	Հոռոմ	1002	1062	2064	125	93	218	240	164	404	567	612	1179	112	151	263	276	0	95	11	240	220
12.	Հովտաշեն	155	144	299	23	18	41	28	27	55	93	73	166	17	18	35	23	0	13	0	27	33
13.	Մեծ Մանթաշ	1287	1168	2455	103	88	191	124	104	228	680	698	1378	305	353	658	254	1	39	0	600	125
14.	Մեղրաշեն	636	612	1248	46	52	98	97	82	179	433	398	831	60	80	140	71	0	10	13	112	569
15.	Նահապետավան	419	378	797	28	29	57	61	97	158	236	255	491	39	52	91	84	0	18	2	135	67
16.	Նոր Կյանք	802	764	1566	72	69	141	113	120	233	597	576	984	92	116	208	275	0	67	9	265	360
17.	Պեմզաշեն	1604	1529	3133	137	91	228	304	248	552	989	959	1948	174	231	405	405	8	153	15	700	180
18.	Սարալանջ	604	691	1295	50	46	96	62	66	128	450	520	970	37	64	101	110	0	17	15	100	50
19.	Սարատակ	790	680	1470	44	58	102	5	2	7	621	416	1031	178	158	330	150	0	12	0	113	103



20.	Սպանդարյան	844	779	1623	61	51	112	170	144	314	529	515	1044	66	87	153	110	15	45	0	180	57
21.	Վարդաբար	369	327	696	27	25	52	54	47	101	230	192	422	61	70	131	47	0	19	5	200	401
22.	Տուֆաշեն	221	202	423	20	19	39	68	63	131	108	92	200	17	36	53	61	13	22	11	52	48
23	Փանիկ	1467	1460	2927	99	89	188	248	223	471	986	935	1921	134	213	347	310	0	151	5	750	175
24.	Փոքր Մանթաշ	1508	1476	2984	115	109	224	256	195	454	816	815	1631	93	112	205	256	0	82	7	625	124
	Ընդամենը համայնքում	26661	26545	53206	2047	1871	3918	4479	3871	8353	16742	16367	32920	3129	255	7368	440	169	2270	663	8940	9928



2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Սոցիալական պաշտպանության բնագավառում համայնքային սոցիալական աշխատողի միջոցով հայտնաբերվելու են սոցիալական աջակցության կարիք ունեցող անձիք և ընտանիքներ: Իրականացվելու են տնային այցելություններ՝ ընտանիքների և անհատների սոցիալական կարքիները գնահատելու, դրանք վերհանելու և կանխարգելելու նպատակով: Համայնքային սոցիալական աշխատողն իրականացնելու է պլանավորում, գնահատում՝ կոորդինացնելով համայնքում առկա ռեսուրսները: Համայնքի խնդիրն է քաղաքացիների սոցիալական պաշտպանությունը՝ պետական և համայնքային սոցիալական ծրագրերի իրականացմամբ, հնարավոր ռիսկերի նվազեցմամբ, որով համայնքում կայուն սոցիալական միջավայրի ձևավորման համար բոլոր նախադրյալներն ապահովվելու է:

Սոցիալական ծրագրերը նպատակաուղղված են լինելու ռիսկերի կանխարգելմանը՝ աղքատություն, հաշմանդամություն, գործազրկություն, բռնություն, սոցիալական մեկուսացում, վնասակար սովորույթներ, դժբախտ պատահարներ, պատերազմի հետևանքով տուժած ընտանիքներ և զինձառայողներ:

2022-2026 թթ. համայնքային սոցիալական աշխատողը համայնքի խնդիրները լուծելու նպատակով համագործակցելու է համայնքում առկա պետական և ոչ պետական կառույցների հետ՝ ՄՄԾ, եկեղեցի, դպրոց, մանկապարտեզ, Առաքելություն Հայաստան ՀԿ, սոցիալական աջակցության կենտրոն և այլն: Համայնքի զարգացման, հիմնախնդիրների լուծման և բարեկեցության հասնելու համար ընդգրկվելու են նաև համայնքի անդամները:

«Սոցիալական ոլորտի բարելավում»

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն					
Ծրագրի անմիջական նպատակ՝ Սոցիալական պաշտպանության ապահովում	Ցուցանիշներ /հազար դրամ/	նախատեսված	կանխատեսվող	կանխատեսվող	կանխատեսվող	կանխատեսվող
		2022	2023	2024	2025	2026
		20000,0	21000,0	22050,0	23153,0	24310,0
Ծրագրի հիմնական գործողությունները	Շահագրգիռ կողմերի հետ համագործակցություն՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված համայնքի բնակիչների խնդիրների լուծման նպատակով:					
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 20 000.0 ՀՀ դրամ Ընդհանուր բյուջեն՝ 110 513.0 ՀՀ դրամ:					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Պետական և ոչ պետական, դոնոր կազմակերպություններ					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Պատերազմ, համաճարակ, ֆինանսական միջոցների սղություն					
Ծրագրի հիմնական շահառուները	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված համայնքի բնակիչներ					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2022-2026 թվականներ					
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրով նախատեսվում է կազմակերպել և իրականացնել դասընթացներ՝ ծնողավարում, ֆինանսական գրագիտություն, առողջապարելակերպ, իրականացվելու է նաև իրազեկման աշխատանքներ տարբեր թեմաներով:					

2022 թվականին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում իրականացվող ծրագրերը և 2023 թվականին կանխատեսվող ծրագրերը



2022-2026թթ. ընթացքում համայնքը նախատեսում է լայնորեն համագործակցել պետական կառավարման մարմինների, միջազգային և տեղական կազմակերպությունների, ՔՀՄՀ-ի(քաղաքացիական հասարակության և մասնավոր հատված) և այլ շահագրգիռ կողմերի հետ:

2022 թվականին նախատեսվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և Արթիկ համայնքի համայնքային բյուջեի համաֆինանսավորմամբ իրականացնել հետևյալ սուբվենցիոն ծրագրերը՝

- Արթիկ քաղաքի և Հայկասար, Հայրենյաց, Պեմզաշեն, Սարատակ, Վարդաքար, Տուֆաշեն, Արևշատ, Հովտաշեն, Գետափ գյուղերի՝ գիշերային լուսավորման ցանցի ընդլայնման աշխատանքների իրականացում
- Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի կենտրոնական հրապարակի և հարակից 6 փողոցների բարեկարգում ասֆալտապատման միջոցով
- Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի և Արևշատ, Նահապետավան, Պեմզաշեն, Սարալանջ և Հառիճ գյուղերի ճանապարհների տուֆ քարով սալապատում
- Արթիկ համայնքի Սպանդարյան և Նոր Կյանք գյուղերի ոռոգման համակարգի կառուցում
- Արթիկ համայնքի Փանիկ, Սարալանջ գյուղերի մշակույթի տների վերանորոգում
- Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի թիվ 6 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում
- Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Տուֆագործների և Թամանյան փողոցների ասֆալտապատում և Շիրակացի փողոցի մայթի կառուցում
- Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի Արթիկի համայնքապետարանի համաֆինանսավորմամբ Արթիկ համայնքի կոմունալ ծառայությունների կարիքների բարելավման համար նախատեսվում է ձեռք բերել 9 միավոր տեխնիկա
- 2022 թվականին կավարտվեն Փանիկ գյուղի մանկապարտեզի վերանորոգման և Հոռոմ գյուղի մանկապարտեզի կառուցման աշխատանքները
- Արթիկ համայնքի Արթիկ քաղաքում, Արևշատ և Նոր Կյանք գյուղերում Սոցիալական զարգացման հիմնադրամի և Արթիկի համայնքապետարանի համաֆինանսավորմամբ նախատեսվում է կառուցել 3 մոդուլային մանկապարտեզներ,

որոնց նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումն ավարտման փուլում են: 2022-2023 թթ.. ընթացքում նախատեսվում է 3 ծրագրերն իրականացնել ամբողջությամբ:

2023 թվականին Արթիկ համայնքում կանխատեսվող սուբվենցիոն ծրագրերով նախատեսվում է

- Արթիկ համայնքի թվով 6 բնակավայրերի գազատարի ներքին ցանցի կառուցում
- Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Իսահակյան 60 հասցեում գտնվող թիվ 1 մանկապարտեզի և Լեոնակերտ գյուղի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում
- Արթիկ համայնքի Հոռոմ, Անուշավան գյուղերի մշակույթի տների բերանորոգում, Լուսակերտ գյուղի վարչական շենքի և համայնքային կենտրոնի տանիքի վերանորոգում, Մեղրաշեն գյուղի արվեստի դպրոցի վերանորոգում և Նոր Կյանք գյուղի երաժշտական դպրոցի վերանորոգում
- Արթիկ համայնքի թվով 12 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում
- Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Յուրի Գազարինի անվան և Բարեկամության զբոսայգիների բարեկարգում
- Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Անկախության և Բաղրամյան փողոցների ասֆալտապատում
- Արթիկ համայնքի թվով 6 գյուղերի խմելու ջրագծի վերանորոգում
- Արթիկ համայնքի թվով 12 բնակավայրերի ներհամայնքային ճանապարհների տուֆ քարով սալապատում
- 2022-2026 թթ. ընթացքում կշարունակվեն համայնքի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, ՔՀՄՀ-ի (քաղաքացիական հասարակության և մասնավոր հատված) սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության, բարեգործական ծրագրերը և միջոցառումները:

2.3 ՊԱՏՎԻՐԱԿԱՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Համայնքի ծառայությունների բնագավառի հիմնական ձեռնարկությունները և ծառայությունները

Համայնքում առևտրի և ծառայությունների ոլորտի օբյեկտները հիմնականում կենտրոնացված են Արթիկ քաղաքում: Համայնքում մատուցվում են ֆինանսավարկային, նոտարական, գրադարանային, առողջապահական, ապահովագրական, կապի, ջրամատակարարման, էներգամատակարարման, գազամատակարարման և այլ ծառայություններ:

Աղյուսակ 3-ում բերված է համայնքի 24 բնակավայրերում առևտրի և ծառայությունների ոլորտի օբյեկտների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ըստ առանձին բնակավայրերի:



Արթիկ քաղաքում գործում է ՀՀ ԱԱԾ Արթիկի բաժին, ՀՀ Պաշտպանության նախարարության Շիրակի մարզի զինվորական կոմիսարիատի Արթիկի բաժանմունքը, ՀՀ Ոստիկանության Արթիկի բաժինը, ՀՀ Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Արթիկի անձնագրային բաժանմունքը, Արթիկ տարածքային նոտարական գրասենյակը, Միասնական սոցիալական ծառայության Արթիկի տարածքային բաժինը, ՀՀԱՆ Արթիկի ՔԿԱԳ տարածքային ստորաբաժանում, ԱԻՆ Արթիկի հրշեջ փրկարարական ջոկատը, ՀՀ ԿԱԱԳԿՊԿ <<Արթիկ>> սպասարկման գրասենյակը, <<Գազալքում Արմենիա>> ՓԲԸ-ի ԳԳՄ Արթիկի տեղամասը, <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ-ի Ղարս մասնաճյուղի <<Արթիկի էլցանց>>-ը, <<Վեոլիաջուր>> ԲԲԸ, <<Արթիկի հրժշկական կետրոն>> ՓԲԸ, <<ՎՏԲ Հայաստան>>, <<ԱԿԲԱ>>, <<ՅՈՒՆԻ>>, <<ՀԱՅ ԲԻԶՆԵՍ>>, <<ԱՐԴՇԻՆ>> բանկերի, <<ՖԻՆՔԱ>> <<ԱՐԵԳԱԿ>>, <<ՍԵՖ ՈՒՎԿ>>, <<Ֆաստկրեդիտ>>, վարկային կազմակերպությունների, կապի <<ՄՏՍ Հայաստան>>, <<ՅՈՒՔՈՍ>>, <<TEAM TELECOM ARMENIA>>, <<Հայփոստ>> ՓԲԸ-ների մասնաճյուղերը, <<ԱՐԹԻԿ Ճանշին>> ՓԲԸ-ները, շինարարական կազմակերպություններ և այլն:



Աղյուսակ 3. Տեղեկատվություն համայնքի առևտրի և ծառայությունների ոլորտի օբյեկտների վերաբերյալ՝ ըստ առանձին բնակավայրերի (01.01.2022 թ. դրությամբ)

Համայնքի 2022 թ. տարեկան բյուջեի ընդհանուր եկամուտները կազմում են 2,026,818.8 հազ. ՀՀ դրամ, որի մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը՝ 515,789.0 հազ. ՀՀ դրամ (25.4%):



Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները

Բնակավայրը	Առևտրի օբյեկտ	Դեղատուն	Վարսավ իրանոց	Հանրային սննդի կետ	Բենզալց ալկայան	Գազալցակայան	Ավտոտեխն սպասարկման կետ	Խաղատուն	Կոշիկի վերանորոգման կետ	Ռեստորան
Արթիկ	50	13	11	10	4	5	15	-	5	1
Լուսակերտ	2	-	-	-	-	-	-	-	-	-
Սարատակ	3	-	-	-	-	-	-	-	-	-
Հոռոմ	12	-	-	-	-	-	-	-	-	-
Հայրենյաց	2	-	-	-	-	-	-	-	-	-
Տուֆաշեն	1	-	-	-	-	-	-	-	-	-
Պեմգաշեն	9	2	-	1	-	-	1	-	-	-
Լեռնակերտ	2	-	-	-	-	-	-	-	-	-
Նոր Կյանք	5	-	-	-	-	-	-	-	-	-
Վարդաքար	1	-	-	-	-	-	-	-	-	-
Փանիկ	11	2	-	1	2	-	1	-	-	-
Մեղրաշեն	5	-	-	-	-	-	-	-	-	-
Անուշավան	6	-	-	-	-	1	1	-	-	-
Գետափ	2	-	-	-	-	-	-	-	-	-
Հառիճ	6	-	-	-	1	-	-	-	-	-
Նահապետավան	3	-	-	-	-	-	-	-	-	-
Սարալանջ	5	-	-	-	-	-	-	-	-	-
Փոքր Մանթաշ	4	-	-	-	-	-	-	-	-	-
Արևշատ	3	-	-	-	-	-	1	-	-	-
Գեղանիստ	1	-	-	-	-	-	-	-	-	-
Սպանդարյան	5	-	-	-	-	-	1	-	-	-
Մեծ Մանթաշ	8	2	-	-	3	3	-	-	-	-
Հովտաշեն	-	-	-	-	-	-	-	-	-	-
Հայկասար	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	146	19	11	12	10	9	20	0	5	1



Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքի ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 4-ում և 5-ում:

Աղյուսակ 4. Համայնքում առկա անասնազվաքանակի, անասնապահական արտադրանքի ծավալները՝ ըստ բնակավայրերի (2022թ.)

h/h	Բնակավայրի անվանումը	Խոշոր եղջերավոր անասուն		Ոչխար (գլուխ)	Թռչուն (թև)	Մեղու (փեթակ)	Խոզ (գլուխ)	Մսի արտադր. (տոննա)	Կաթի արտադր. (տոննա)	Անասնակեր (տոննա)
		Ընդամենը (գլուխ)	Որից կով (գլուխ)							
1	Արթիկ	1108	484	384	3191	440	560	37	813	2148
2	Հովտաշեն	264	123	362	789	70	16	22	206	620
3	Սպանդարյան	673	381	35	3247	178	12	40	640	1225
4	Մեծ Մանթաշ	984	458	208	1124	0	36	80	769	1854
5	Սարալանջ	497	265	552	679	109	144	40	445	1115
6	Գեղանիստ	833	417	204	2185	267	75	66	700	1580
7	Փանիկ	903	411	212	4128	265	448	91	690	1710
8	Հայկասար	219	112	2	400	176	24	17	188	395
9	Հոռոմ	1441	720	298	5100	604	622	115	1200	2720
10	Հայրենյաց	539	277	161	1468	355	36	40	465	1034
11	Պեմգաշեն	767	311	450	1705	323	237	76	522	1560
12	Լեռնակերտ	607	398	1400	1166	128	21	87	540	1500
13	Գետափ	372	188	81	1172	20	48	28	316	702
14	Սարատակ	820	530	20	750	120	10	44	890	1484
15	Արևշատ	1147	415	470	1397	40	87	113	697	2253
16	Վարդաքար	333	181	313	937	54	24	25	304	725
17	Տուֆաշեն	308	163	91	566	71	5	27	274	591
18	Անուշավան	419	212	72	2181	97	22	32	356	783
19	Մեղրաշեն	588	269	445	2251	738	181	55	452	1232
20	Լուսակերտ	330	154	76	1092	0	20	28	259	624
21	Նահապետավան	282	160	62	609	0	13	19	269	532
22	Հատիճ	229	97	400	916	22	41	21	163	572
23	Նոր Կյանք	407	233	63	1110	59	46	27	391	758
24	Փոքր Մանթաշ	1305	749	604	1307	74	51	85	1258	2590
ԸՆԴԱՄԵՆԸ		15375	7708	6965	39470	4210	2779	1215	12807	30307

Համայնքի հողային հաշվեկշիռն ներկայացված է հավելված 5-ում:

Աղյուսակ 5. Համայնքում դաշտավարության գյուղատնտեսական արտադրանքի և ծավալների ցուցանիշները՝ ըստ բնակավայրերի (2022թ.)



h/h	Բնակավայրի անվանումը	Հացահատիկ		Կարտոֆիլ		Բանջարեղեն		Պտուղ և հատապտուղ	
		Ցանքատարածույթ յուն (հա)	Համախառն բերքը (տոննա)	Ցանքատարած ույթյուն (հա)	Համախառն բերքը (տոննա)	Ցանքատարած ույթյուն (հա)	Համախառն բերքը (տոննա)	Ցանքատա րածույթյուն (հա)	Համախառն բերքը (տոննա)
1	Արթիկ	250	535	8	20	12	15	23	20
2	Լուսակերտ	95	209	7	15	3	12	0	-
3	Սպանդարյան	220	484	35	20	20	3	3	2
4	Հառիճ	150,5	331,1	35	15	18	2	3	1
5	Պեմզաշեն	15	35	7	10	1	0,7	5	3,2
6	Գետափ	170	374	5	60	5	7	5,2	38,5
7	Մեծ Մանթաշ	246	541,2	80	20	64	1	-	-
8	Հովտաշեն	105	231	4	80	2	2	6	9
9	Փանիկ	280	616	11	8,3	6	4	14	4
10	Հայրենաց	470	1034	0,5	7	0,5	0,06	0,5	2
11	Տուֆաշեն	251	552,2	0	0	0	-	1	1,5
12	Հոռոմ	360	792	20	15	2	13	2	1,5
13	Արևշատ	350	770	60	25	40	20	1	0,7
14	Սարալանջ	250	550	22	12	11	1	0	0
15	Սարատակ	380	836	25	20	8	1	0,3	0,05
16	Լեռնակերտ	100	220	25	15	0	0	0	0
17	Նոր Կյանք	415	913	7	10	1	0,7	5,1	3,2
18	Նահապետավան	50	110	22	15	19	2	3	1,5
19	Մեղրաշեն	450	990	10	5	5	2	10	300
20	Փոքր Մանթաշ	160	352	20	20	30	2	1	3
21	Վարդաքար	310	682	5	15	2	2	8	2
22	Հայկասար	239	525,8	5	25	0	0	0	0
23	Գեղանիստ	280	616	8	10	5	2	1	0,07
24	Անուշավան	350	770	10	15	5	2	1	0,7
ԸՆԴԱՄԵՆԸ		5946.5	13069.3	436,5	457.3	259,5	94,46	88,1	393,92



Մարզ

Շիրակ

8

(անվանում)

(կոդ)

Համայնք

Արթիկ համայնք

595

(անվանում)

(կոդ)

(հեկտա
րներով)

NN	Նպատակային նշանակություն	Հողատարածք, գործառնական նշանակություն	Ընդամենը(2+3+4+8+12)	Սեփականության սուբյեկտ										
				ՀՀ քաղաքացիների	ՀՀ իրավաբանական անձանց	համայնքային				պետական				
						ընդամենը (5+6+7)	Տրված անհատույց օգտագործման	Տրված վարձակալության	Օգտագործման և վարձակալության չտրված	ընդամենը (9+10+11)	Տրված անհատույց օգտագործման	Տրված վարձատրության	Օգտագործման և վարձատրության չտրված	
	Ա	Բ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1,1	1.Գյուղատնտեսական	վարելահող	14292.4419	12127.709	3.6467	1923.2545		1650.3967	272.8578	237.8317		186.9	50.9317	
1,2		Բազմ տնակներ, ընդամենը	4.73	0.57		4.16		4.16						
1.2.1		Այդ թվում՝ պտղատու այգի	4.73	0.57		4.16		4.16						
1.2.2		Խաղողի այգի												
1.2.3		Այլ բազմամյա												
1,3		Խոտհարք	250.12	14.28		158.96		84.15	74.81	76.88		7.42	69.46	
1,4		Արոտ	22933.16	19.20	0.07	12704.18		1417.85	11286.32	10209.72		3197.71	7012.01	
1,5		Այլ հողատեսքեր	3907.42	2.32	0.68	1092.90		151.27	941.63	2811.52		99.99	2711.53	
1		Ընդամենը	41387.88	12164.08	4.39	15883.45		3307.83	12575.62	13335.95		3492.02	9843.93	
2,1	2.Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	2946.10	2924.88	0.05	21.17		0.30	20.87					
2.1.1		Այդ թվում՝ տնամերձ հողեր	2915.65	2915.62	0.03									
2.1.2		Այգեգործական(ամառ-ն)												
2,2		Հասարակական կառուցապ.	92.16	6.51	0.78	33.25	1.86	0.25	31.14	51.61	22.52		29.09	
2,3		Խառը կառուցապատման	1.13	0.37	0.68	0.08		0.07	0.01					
2,4		Ընդհանուր օգտագործման	382.72			382.71			382.71	0.01			0.01	



2,5		Այլ հոդեր	679.10	2.42		676.68		0.00	676.68					
2		Ընդամենը	4101.20	2934.18	1.52	1113.89	1.86	0.62	1111.41	51.62	22.52		29.10	
3,1	3. Արդյունաբերություն, և այլ արտ. Նշանակության օբ.	Արդյունաբերություն	90.26	4.66	40.97	44.63	0.76	10.42	33.45					
3,2		Գյուղատնտեսական, արտադր.	241.00	27.45	5.72	198.38		10.51	187.86	9.44			9.44	
3,3		Պահեստարանների	20.11	0.12		19.99			19.99					
3,4		Ընդերք օգտագործման	757.95			21.21		19.71	1.50	736.74	3.00	424.42	309.32	
3		Ընդամենը	1109.32	32.23	46.70	284.20	0.76	40.64	242.80	746.18	3.00	424.42	318.76	
4,1	4.Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակ. Օբ.	Էներգետիկայի	3.45	0.03		3.42	2.19	0.23	1.01					
4,2		Կապի	1.33	0.01	0.01	1.31			1.31					
4,3		Տրանսպորտի	145.87			14.03			14.03	131.84			131.84	
4,4		Կոմունալ ենթակառուցվածք	16.45	0.01		12.42		1.03	11.38	4.03			4.03	
4		Ընդամենը	167.11	0.05	0.01	31.18	2.19	1.26	27.74	135.87			135.87	
5,1	5. Հատուկ պահպանվող տարածքների	Բնապահպանական												
5.1.1		Այդ թվում՝ արգելոցներ												
5.1.2		արգելավայրեր												
5.1.3		ազգային պարկեր												
5,2		առողջարարական												
5,3		հանգստի	7.74			7.74			7.74					
5,4		Պատմական և մշակութային	328.79			64.36			64.36	264.43			264.43	
5		Ընդամենը	336.53			72.10			72.10	264.43			264.43	
6	6.Հատուկ նշանակության	Ընդամենը	152.65							152.65			152.65	
7,1	7. Անտառային	Անտառ	870.60			6.03			6.03	864.57			864.57	



7,2		Թփուտ												
7,3		Վարելահող												
7,4		Խոտհարք												
7,5		Արոտ												
7,6		Այլ հողեր												
7		Ընդամենը	870.60			6.03			6.03	864.57			864.57	
8,1	8.Զրային	Գետեր	84.78						84.78			84.78		
8,2		Ջրամբարներ	259.84			0.57		0.57	259.27			259.27		
8,3		Լճեր	11.90			5.79		5.79	6.11			6.11		
8,4		Ջրանցքներ	50.14			35.99		35.99	14.15			14.15		
8,5		Հիդրոտեխ. և ջրտնտ. Այլ օբ..	10.02			1.11		1.11	8.91			8.91		
8		Ընդամենը	416.68			43.46		43.46	373.22			373.22		
9,1	9.Պահուստային	Աղուտներ												
9,2		Ավազուտներ												
9,3		Ճահիճներ												
9,4		Այլ օգտագործելի հողեր												
9		Ընդամենը												
Ընդհանուր հողեր(1+2+3+4+5+6+7+8+9)			48541.96	15130.54	52.62	17434.31	4.80	3350.35	14079.16	15924.50	25.52	3916.44	11982.54	

Համայնքի զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական,
պատմական և մշակութային հուշարձանները, կազմակերպվող միջոցառումները



Արթիկը՝ որպես համայնք, ձևավորվել է 2021 թվականի դեկտեմբերի 5-ին, այն իր մեջ ներառում է 1 քաղաք և 23 գյուղ, դրանք են՝ Արթիկ, Անուշավան, Արևշատ, Գեղանիստ, Գետափ, Լեռնակերտ, Լուսակերտ, Հայկասար, Հայրենյաց, Հառիճ, Հոռոմ, Հովտաշեն, Մեծ Մանթաշ, Մեղրաշեն, Նահապետավան, Նոր Կյանք, Պեմզաշեն, Սարալանջ, Սարատակ, Սպանդարյան, Վարդաքար, Տուֆաշեն, Փանիկ, Փոքր Մանթաշ:

Արթիկ. Արթիկ քաղաքը Հայաստանի ամենահին ու նշանավոր վայրերից է, որի խոսուն վկայությունն է տարածքում պահպանված բազմաթիվ պատմական հուշարձանները, որոնք իրենց ուրույն տեղն ունեն միջնադարյան Հայաստանի ճարտարապետության մեջ: Արթիկի Սբ. Գր. Լուսավորիչ (սբ. Գևորգ) եկեղեցին, ըստ ուսումնասիրությունների, 7-րդ դարի կառույց է, ունի խաչաձև հատակագիծ, կենտրոնագագաթ կառուցվածք: Որմնասյունակների խոյակներն ու պատուհանների պսակները զարդարված են տարբեր զարդանախշերով՝ խաղողի ողկույզ և տերև, նոսն և արմավենու տերև: Միջնադարյան կոթող է նաև Սբ. Աստվածածին (սբ. Մարիամ) եկեղեցին: Ունի եռանավ բազիլիկային և գմբեթավոր խաչաձև հատակագծային բնորոշ գծեր: Սբ. Աստվածածին եկեղեցին միանավ սրահ-եկեղեցուց գմբեթաձև եկեղեցուն անցնելու նախօրինակ է, որի շնորհիվ առավելապես այն ձեռք է բերել կարևոր նշանակություն հայ ճարտարապետական մտքի համար:

Անուշավան. Հիմնադրվել է 18-րդ դարի երկրորդ կեսին, Ալաշկերտի և Բասենից գաղթած հայերի կողմից:

Արևշատ. Արևշատ գյուղում են գտնվում XIV-XV դարերի եկեղեցիները՝ <<Կարմիր ավետարան>>, <<Սուրբ Եղիշ Երեմիայի>> և <<Մարինենց սուրբ>> մատուռները:

Գեղանիստ. Բնակչությունը գաղթել է Մուշից, Խնուսից, Ալաշկերտի գավառի Բանդոց ու Վերին Բասենի շրջանի գյուղերից: Գեղանիստն ունի 1711թ. <<Ժամ>> և 1852թ. մեկ այլ եկեղեցի: <<Հմայիլ>>, <<Իրիցտան Ավետարան>>, <<Բավոյի Սուրբ>> և <<Գրիգոր Նարեկացի> մատուռներ:

Գետափ. Գյուղն ունի 1862 թ-ի <<Ժամ>> եկեղեցի, <<Ուրուխների>> վանք, <<Թուխ Մանուկ>> և <<Կոժկոն ավետարան>> սրբատեղիներ, <<Ծակ քար>> մատուռ:

Լեռնակերտ. Պատմամշակութային առանձնահատուկ 4-րդ դարի կոթող կա նաև Լեռնակերտ գյուղում: Հարավային և հարավարևելյան մասերում առկա են կիկլոպյան <<Վարի Բերդ>> և <<Վերի Բերդ>> ամրոցները: 1893 թ. Ն. Մառն առանձնակի ուշադրություն է դարձնում նրա միանավ բազիլիկ կառուցվածքի վրա, մշակել ու զարգացրել են հայկական ճարտարապետության թաղածածկ կառուցվածքի հնագույն և հիմնական տիպերը: Եկեղեցու խորանի կամարատեղը պայտաձև է, իսկ ծածկը՝ երկլանջ և առանց գմբեթ: Եկեղեցու նեղ ճակատները պատված են եռանկյունի ճափրոններով՝ իրենց թեք և հորիզոնական ատամնավոր քիվերով: Լեռնակերտի եկեղեցու շենքը հեթանոսական ծագում է ունեցել, քանի որ եկեղեցու հիմքերը դրված են անտաշ հսկայական որձաքարերի վրա: Եկեղեցու մոտ պահպանվել են 9-10 դարերի մի քանի խաչքարեր:

Լուսակերտ. Գյուղն ունի XVII-XIX դդ. Սբ. Աստվածածին եկեղեցի: Շրջակայքում կան մ.թ.ա. 2-րդ հազարամյակին վերաբերվող դամբարաններ և հնություններ:

Հայկասար. Նախկինում ունեցել է Սարիքաշ անվանումը: Հայկասար է վերանվանվել 1946 թ-ին: Գյուղի բնակչության նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Կարսի մարզից:

Հայրենյաց. Նախկինում ունեցել է Սանգյառ, Սոնգյուռլի, Սունգուռլի անվանումները: Հայրենյաց անվանվել է 1946 թ-ից: Հայրենյացի բնակչության նախնիների մի մասը գաղթել են Արևմտյան Հայաստանի Բասենի, Մուշի, Կարսի շրջաններից:

Հառիճ. Պատմամշակութային գյուղ է Արթիկ համայնքի Հառիճ գյուղը, որի հարավում է գտնվում բրոնզեդարյան բնակատեղի (մ.թ.ա. 3-րդ հզմ.- մ.թ. 10դ.) միջնադարյան Հառիճի վանքը (VII-XIII դարեր): Գյուղի հարավային կողմում, երեք դարավանդների վրա գտնվում է 12 հա ընդհանուր մակերեսով բրոնզեդարյան բնակատեղի, հուշարձանը բազմաշերտ է, պարունակում է մ.թ.ա. III հազ.-



ից մինչև մ.թ. X դարը: Հուշագրավ է Հառիճում բացված տաճարային համալիրը: Հառիճում է գտնվում VII-XIII դարերով թվագրվող վանական համալիրը՝ հիշատակությունը Մխիթար Անեցի: Հառիճավանքի կազմում են մինչև XIII դ. կառուցված Ս. Գրիգոր և Ս. Աստվածածին եկեղեցիները, գրատուն-դպրատունը և երկու մատուռ: Եկեղեցին գմբեթավոր դահլիճների տիպի կառույց է: Արևմտյան կողմի 2-րդ հարկի ավանդատները փոխարինվում են հայկական ճարտարապետության մեջ եզակի հանդիպող սյունազարդ օթյակներով, ուշագրավ է ճակատի հորինվածքում Զաքարե և Իվանե եղբայրների կտիտորական հարթաքանդակը: Եկեղեցու հարավարևելյան կազմում պահպանվել է վանքի դպրատան քառասյուն գավիթների տիպի կառույցի հյուսիս-արևմտյան փոքր հատվածը, եղել է գրչության և մանրանկարչության կենտրոն: <<Ճգնավորի մատուռ>> գտնվում է համալիրի հարավ-արևմտյան մասում, ըստ պատմական աղբյուրների Հառիճավանքն ավերվել է XI դ սելջուկյան արշավանքների ժամանակ: 1892թ.-ին Սբ. Գրիգոր եկեղեցուն արևելքից կցվել է զանգակատուն: 1893թ. կառուցվել է ձորամիջի կամուրջը, որով և ավարտվել է ընկերության շինարարական գործունեությունը:

Հոռոմ. Հոռոմում բլուրների վրա, գտնվում է <<Արծնաբերդ>> կիկլոպյան ամրոցը: Հոռոմում և շրջակայքում կան հին գերեզմաններ, դամբարաններ: Հոռոմն ունի սուրբ Հռիփսիմե (1861թ) և Սուրբ Աստվածածին (1868թ) եկեղեցիներ, XII-XIII դդ. <<Թուխ Մանուկ>> մատուռ:

Հովտաշեն. Գյուղը 1830թ.-ին հիմնել են Կարսից գաղթածները: Հովտաշենում կա եկեղեցի և XVII դարի Սբ. Մինաս մատուռ:

Մեծ Մանթաշ. Գյուղում կա 18-րդ դարի սկզբներին կառուցված <<Սուրբ Աստվածածին>> խաչքարատիպ եկեղեցի: Մեծ Եղեռնի 100-ամյակի կապակցությամբ համայնքի կենտրոնում տեղադրվեց խաչքար հուշարձան կոթող:

Մեղրաշեն. Արագած լեռան հյուսիսային ստորոտում, ծովի մակարդակից 1600մ բարձրության վրա, Լենինական-Պեմզաշեն երկաթուղու ճյուղավորության ձախակողմյան հարթավայրում տարածված բնակավայրերից է Հյուրասեր, Ղազանչի այժմ՝ Մեղրաշեն գյուղը: Նախկին Ղազանչին Մեղրաշեն է վերանվանվել 31.05.1946թ: Գյուղը հիմնադրվել է 1828-1829թթ, ազգաբնակչության հիմնական մասը տեղափոխվել է պատմական Հայաստանի Բասենից և Կարսից, իրենց հետ բերելով շատ գեղեցիկ ավանդույթներ և սովորույթներ, որոնք արդիական են բոլոր ժամանակների համար: Մեղրաշենցիներն ակտիվ մասնակցություն են ունեցել Երկրորդ համաշխարհային պատերազմին և Արցախյան ազատամարտին, նրանց հիշատակը հավերժացնելու համար գյուղում տեղադրված է հուշարձան և խաչքար-հուշարձան: Գյուղում պահպանվել է նոր ժամանակների Սուրբ Աստվածածին եկեղեցին, որը կառուցվել է անհայտ սրբի գերեզմանի վրա և գերեզմանը կոչվում է <<Լույս գերեզման>>: Ըստ մեզ հասած ավանդազրույցների՝ գերեզմանում գտնվող մարմինն անփութ է: Շրջակայքում կան պահպանված Չավալու, Մանասի խարաբեք, Աբրահամի խարաբա կոչվող գյուղատեղիներ, դամբարաններ, գերեզմանոցներ, որոնք կարող են գրավել զբոսաշրջիկների և հնետգետների ուշադրությունը:

Նահապետավան. Նահապետավանում կա VI դարի Սբ. Գևորգ եկեղեցի:

Նոր Կյանք. Նախնիները 1829-30 թթ.-ին գաղթել են Կարսից և Խնուսից: Նոր Կյանք գյուղում է գտնվում Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (VI-VII դդ), <<Թուխ Մանուկ>> մատուռ (X-XII): Այս կառույցը կենտրոնագմբեթ կառուցվածք է խաչաձև հատակագծով: Կառուցման հավանական ժամանակը 7-րդ դարն է: Հուշարձանների պատերին պահպանվել են դժվարընթեռնելի արձանագրություններ 909-1003-1010 թ.-ով: Եկեղեցու մոտ կան մի քանի հին շիրմաքարեր: Հյուսիսային պատին փորագրված են Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջան վիմագիր, որոնք լուռ էին մինչև 20-րդ դարի 80-ական թթ-ը:

Պեմզաշեն. Առանձնանում է Արթիկ համայնքի Պեմզաշեն գյուղի տարածքում գտնվող եռախորան եկեղեցին: Գյուղի հարավ-արևելքում կան միջնադարյան բերդի պարիսպների հետքեր, գտնվել են մ.թ.ա. II հազարամյակի բրոնզե և երկաթե իրեր: Գյուղի



կենտրոնում է գտնվում եռախորան եկեղեցին, որը բաղկացած է իրար կից կառուցված վաղ միջնադարյան եկեղեցիների երեք եկեղեցիներից: Համալիրի կենտրոնական եկեղեցին եռախորան է, ներքուստ խաչաձև, կենտրոնագմբեթ, արտաքուստ ներառված ուղղանկյուն ծավալի մեջ: Եռախորան եկեղեցուն հարավից կից է VI դ միանավ թաղածածկ փոքր եկեղեցին: Խորանը ներառված է ուղղանկյուն հատակագծի մեջ: Միակ մուտքը քանդակագարդ է, հյուսիսից կից է V դ միանավ մեծ բազիլիկը, որը հուշարձանախմբի հնագույն կառուցված ներքուստ պայտաձև խորանով, արտաքուստ հնգանիստ, ուղղանկյուն հատակագծով սրահ է, կառուցված է սրբատաշ տուֆի խոշոր քարերով, պահպանվել են պատերի ստորին շարքերը և բազմաստիճան որմնախարիսխը:

Սարատակ. Սարատակում կա կանգուն եկեղեցի: Նախնիները 1830 թ.-ին գաղթել են Վերին Բասենի Կամրջագեղ գյուղից:

Սպանդարյան. Գյուղը հիմնադրվել է 1829թ.-ին Ադրիանապոլիսի պայմանգրի 13-րդ հոդվածով: Գյուղը որպես գյուղ հայտնի է եղել դեռևս բրոնզի դարաշրջանում: Այդ մասին է վկայում գյուղի տարածքից հայտնաբերված բրոնզե զենքեր, զարդեր և խեցեղեն: Սեպագիր արձանագրություններ է թողել Արգիշտի առաջինը թ.ա. 785թ.-ին: Գյուղը հայտնի է հայրենի պատմության և մշակութային խոսուն վկաներ հանդիսացող բազմաթիվ հուշարձաններով՝ բրոնզե դարաշրջանի պեղված և չպեղված դամբարաններով, նախաուրարտական շրջանի կիկլոպյան ամրոց իր միջնաբերդով, քարանձավներ, 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի ջրաղացներ գերեզմանոց <<Կուլիանի>> պատմաերկրագիտական թանգարան: Ինչպես նաև Սպանդարյանն ունի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցի:

Վարդաքար. Վարդաքար գյուղի շրջակայքում կան գյուղատեղի, <<Սուրբ դաշտ>> մատուռ, խաչարձան, 19-րդ դարի Սուրբ Աստվածածին եկեղեցի, բրոնզե դարին վերաբերող զանազան հնություններ:

Տուֆաշեն. Տուֆաշեն գյուղում է գտնվում XIX դարի <<Ժամ>> եկեղեցին, <<Թուխ Մանուկ>> մատուռ (VII-XI դարեր), <<Արմենքար>> կիկլոպյան ամրոցը:

Փանիկ. Գյուղի բնակչության մեծամասնությունը կաթոլիկ հայեր են, Փանիկ է վերանվանվել 1925թ.: Գյուղը ժամանակին եղել է գրչության կենտրոն: Գյուղում կա Տիրամայր եկեղեցի (1761-1846թթ), գյուղից 5 կմ հյուսիս, <<Ավետիք>> կոչվող վայրում, կան անտիկ շրջանի բերդ ավերակներ:

Փոքր Մանթաշ. Փոքր Մանթաշն ունի 1864թ.-ի մատուռ:

Արթիկի Լմբատավանկ, Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիներ, Հառիճավանք



Համայնքի դպրոցական, նախադպրոցական և արտադպրոցական
կրթական հաստատությունները

Աղյուսակ 6. Համայնքի դպրոցական, նախադպրոցական և արտադպրոցական կրթական հաստատությունների տվյալները՝ ըստ բնակավայրերի (2022թ.)

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Հաստատության անվանումը	Հզորությունը՝ ըստ նախագծի	Փաստացի երեխաների թիվը/2022 թ
1	Ք.Արթիկ	«Արթիկի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	540	538
		«Արթիկի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	600	578
		«Արթիկի թիվ 3 ավագ դպրոց» ՊՈԱԿ	520	252
		«Արթիկի թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	800	201
		«Արթիկի թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1200	274
		«Արթիկի թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նախակրթարան		35
		«Արթիկի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	360	194
		«Արթիկի թիվ 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	250	153
		«Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ	400	286
		«Արթիկի բժշկական քոլեջ» ՊՈԱԿ	160	54
		«Արթիկի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ	300	292
		«Արթիկի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ	140	78
		«Արթիկի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ	140	101
		«Արթիկի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ	120	112
		«Արթիկի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ	120	71
		«Արթիկի Դանիել Ղազարյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	220	189
		«Արթիկի գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ	160	145
		«Արթիկի գեղագիտական դաստիարակության կենտրոն» ՀՈԱԿ	200	170
		«Արթիկի Տիգրան Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ	120	112
		«Արթիկի Վարազ Սամուելյանի անվան մշակույթի տուն» ՀՈԱԿ	160	123
		«Արթիկի մարզադպրոց» ՀՈԱԿ	200	94
		«Արթիկի մարզահամալիր» ՀՈԱԿ	300	96
		«Արթիկի ֆուտբոլի մարզադպրոց» ՀՈԱԿ	400	112
2	գ. Լեռնակերտ	«Լեռնակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	250	149



		«Լեռնակերտի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ	60	44
3	գ. Լուսակերտ	«Լուսակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	120	49
4	գ. Հայրենյաց	«Հայրենյացի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	250	110
		Հայրենյացի նախակրթարան		11
5	գ. Հառիճ	«Հառիճի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	170	130
		«Հառիճի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ	55	38
6		«Հառիճի արվեստի դպրոց» ՀՈԱԿ	40	25
7	գ. Հոռոմի	«Հոռոմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	900	241
		«Հոռոմի նախակրթարան» ՀՈԱԿ	75	25
8	գ. Մեծ Մանթաշ	«Մեծ Մանթաշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	360	284
		Մեծ Մանթաշի նախակրթարան		14
		«Մեծ Մանթաշի մանկապարտեզ» ՀՈԱԿ	40	62
9	գ. Մեղրաշեն	«Մեղրաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	470	141
		Մեղրաշենի նախակրթարան		35
		«Մեղրաշենի արվեստի դպրոց» ՀՈԱԿ	100	50
10	գ. Նոր Կյանք	«Նոր Կյանքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	360	160
		«Նոր Կյանքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ	48	48
		«Նոր Կյանքի արվեստի դպրոց» ՀՈԱԿ	12	48
11	գ. Պեմզաշեն	«Պեմզաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	335	412
		«Պեմզաշենի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ	60	60
		«Պեմզաշենի արվեստի դպրոց» ՀՈԱԿ	100	63
12	գ. Սարալանջ	«Սարալանջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	202	132
		Սարալանջի նախակրթարան		12
13	գ. Սարատակ	«Սարատակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	400	191
		«Սարատակի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ	60	60
14	գ. Սպանդարյան	«Սպանդարյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	180	227
		Սպանդարյանի նախակրթարան		15
		«Սպանդարյանի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ	75	36
15	գ. Տուֆաշեն	«Տուֆաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	145	41
16	գ. Փանիկ	«Փանիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	750	338
		«Փանիկի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ	92	67



		«Փանիկի արվեստի դպրոց» ՀՈԱԿ	100	73
17	գ. Փոքր Մանթաշ	«Փոքր Մանթաշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	450	299
		«Փոքր Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ	60	55
		«Փոքր Մանթաշի արվեստի դպրոց» ՀՈԱԿ	35	26
18	գ. Գետափ	«Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	240	93
19	գ. Վարդաքար	«Վարդաքարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	100	97
20	գ. Արևշատ	«Արևշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	360	240
		Արևշատի նախակրթարան		45
21	գ. Հայկասար	«Հայկասարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	50	19
22	գ. Անուշավան	«Անուշավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	600	242
		«Անուշավանի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ	120	85
		«Անուշավանի Սուրեն Մոսյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ	170	92
23	գ. Գեղանիստ	«Գեղանիստի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	320	177
		«Գեղանիստի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ	60	60
24	գ. Հովտաշեն	«Հովտաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	80	34
25	գ. Նահապետավան	«Նահապետավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	250	88

Համայնքի առողջապահական հաստատությունները

Աղյուսակ 7. Համայնքի առողջապահական հաստատությունների տարեկան այցելուների և մահճակալների թիվը (2022թ.)



Հ/հ	Բնակավայրի անվանումը	Հաստատության անվանումը	Հգորությունը ըստ նախագծի (մահճակալների) թիվը	Տարեկան այցելուների թիվը
1	Արթիկ	«Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ	24	50000
2	Լուսակերտ	Լուսակերտի բուժկետ		1200
3	Սպանդարյան	Սպանդարյանի բուժկետ		1500
4	Հառիճ	Հառիճի բուժկետ		1540
5	Պեմգաշեն	<<Պեմգաշենի ամբուլատորիա>> ՊՈԱԿ		3000
6	Գետափ	Գետափի բուժկետ		750
7	Մեծ Մանթաշ	<<Մեծ Մանթաշի ամբուլատորիա>> ՊՈԱԿ		3500
8	Հովտաշեն	Հովտաշենի բուժկետ		350
9	Փանիկ	<<Փանիկ առողջության կենտրոն>> ՊՈԱԿ		20000
10	Հայրենաց	Հայրենացի բուժկետ		1200
11	Տուֆաշեն	Տուֆաշենի բուժկետ		550
12	Հոռոմ	<<Հոռոմի ամբուլատորիա>> ՊՈԱԿ		2500
13	Արևշատ	Արևշատի բուժկետ		1800
14	Սարալանջ	Սարալանջի բուժկետ		750
15	Սարատակ	Սարատակ բուժկետ		1100
16	Լեռնակերտ	Լեռնակերտ բուժկետ		750
17	Նոր Կյանք	Նոր Կյանքի բուժկետ		2500
18	Նահապետավան	Նահապետավանի բուժկետ		750
19	Մեղրաշեն	Մեղրաշենի բուժկետ		750
20	Փոքր Մանթաշ	Փոքր Մանթաշ բուժկետ		3000
21	Վարդաքար	Վարդաքարի բուժկետ		450
22	Հայկասար	Հայկասարի բուժկետ		450
23	Գեղանիստ	Գեղանիստի բուժկետ		600
24	Անուշավան	Անուշավանի բուժկետ		3000



Համայնքում ըստ տնտեսության ոլորտների զբաղվածությունը և գործազրկության մակարդակը

Աղյուսակ 8. Ըստ տնտեսության ոլորտների զբաղվածության և գործազրկության նկարագիրը

Հ/հ	Ցուցանիշը	Մեքր /ուրտր	Թիվը, մարդ
1.	Գրանցված գործազուրկների թիվը	Ընդամենը	352
		Արական	159
		Իգական	193
2.	Զբաղված բնակիչների թիվը	Ընդամենը	15 373
3.	Զբաղված բնակիչների թիվն՝ ըստ ոլորտների	3.1 Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն	11 155
		3.2 Ձկնորսություն և ձկնաբուծություն	-
		3.3 Հանքագործական արդյունաբերություն	15/225
		3.4 Մշակող արդյունաբերություն, այդ թվում՝ գյուղ. հումքի մշակում	5/35
		3.5 Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	3/21
		3.6 Շինարարություն	7/30
		3.7 Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրա-տեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	405/1550
		3.8 Գյուղատնտեսական ծառայությունների մատուցում	3/30
		3.9 Հյուրանոցային և ռեստորանային ծառայություններ	9/33
		3.10 Տրանսպորտ և կապ	10/50
		3.11 Տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատողներ	1/156
		3.12 Կրթություն, այդ թվում՝ նախադպրոցական կրթություն	16/237
		3.13 Առողջապահություն և սոցիալական ծառայություններ	29/250
		3.14 Կոմունալ և անհատական ծառայություններ	2/37
		3.15 ՀՈԱԿ-ներում աշխատողներ	18/268
		3.16 Պետական մարմիններում աշխատողներ	42/1280
		3.17 Հասարակական կազմակերպություններում աշխատողներ	8/16

Գործազրկության մակարդակը համայնքում կազմում է 43,6 % , հաշվառված է 942 գործազուրկ:

Համայնքում ընտանեկան նպաստի համակարգում փաստագրված տնային տնտեսությունների քանակը, 2022թ. հունվարի 1-ի դրությամբ, կազմում է 2100 ընտանիք, որոնցից ընտանեկան նպաստ են ստանում 1700 ընտանիք, սոցիալական նպաստ՝ 400 ընտանիք:

2022-2026թ.թ. ընթացքում համայնքի ՏԻՄ-երը նախատեսում են լայնորեն համագործակցել պետական կառավարման մարմինների, միջազգային և տեղական կազմակերպությունների, ՔՀՄՀ-ի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

2022 -2026թթ.-ին նախատեսվում են հետևյալ ծրագրերն ու միջոցառումները՝



- Համայնքում գյուղատնտեսության զարգացում, մեքենատրակտորային պարկի ստեղծում, պարարտանյութերի, թունաքիմիկատների, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերում, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրում, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպում, խորհրդատվություն ու աջակցություն այլ ուղղություններով:

- Մանթաշի ջրամբարից փակ խողովակաշարով ոռոգման ջրի անցկացում դեպի ներքևի ենթաշրջանի գյուղերը, Արթիկի ջրամբարի կառուցում:

- Համայնքում «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակահամաճարակային միջոցառումների իրականացումը:

- Համայնքի հանրակրթական դպրոցների շենքերի ընթացիկ նորոգում, ներքին հարդարում, դռների, պատուհանների և սանհանգույցների փոխարինում, ջեռուցում՝ բարելավելով հանրակրթության որակը:

- Համայնքի բոլոր բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի հիմնանորոգում կամ մասնակի վերանորոգում և ջրամատակարարման բարելավում՝ համագործակցության ներգրավելով «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ին:

- Մարզկենտրոն Գյումրու և մայրաքաղաք Երևանի, նաև հանրապետության այլ քաղաքների հետ մշտական հասարակական տրանսպորտային հաղորդակցության կազմակերպում և շահագործում՝ համագործակցության ներգրավմամբ մարզի մասնավոր տրանսպորտային կազմակերպություններին:

- Առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների հասանելիության և մատուցման մակարդակի բարձրացում՝ պետական պատվերի շրջանակներում:

- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, արտակարգ իրավիճակներում համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

2022-2026 թթ. ընթացքում կշարունակվեն համայնքի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, ՔՀՄՀ-ի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության, բարեգործական ծրագրերը և միջոցառումները:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները



Արթիկ համայնքի 2022-2026 թվականների բյուջեների եկամուտների կանխատեսումները կատարելիս հաշվի են առնվել համայնքի 2021 թվականի բյուջեի մուտքերի փաստացի գանձման ցուցանիշները՝ յուրաքանչյուր տարի նախատեսելով եկամուտների որոշակի աճ: Մուտքերի աճը նախատեսվել է՝ հիմք ընդունելով համայնքի հետագա զարգացման հետ կապված պատկերացումներն ու ակնկալիքները, նոր ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը և դրանց դիմաց վճարների գանձման հնարավորությունները և այլն: Համայնքի 2021 թվականի բյուջեի փաստացի սեփական եկամուտները կազմել են 435920.4 հազար դրամ՝ ընդհանուր եկամուտների /2,060,371.1 հազար դրամ/ 21.2%-ը: Նախատեսվել է սեփական եկամուտների աճ՝ նախորդ տարվա համեմատությամբ 2022 թվականին՝ 32224.4 հազար դրամ:

Սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ 2021 թվականին կազմել է 20.6%, 2022 թվականին՝ 25.4 %:

Բյուջեների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները, քանի որ համայնքի ֆինանսական անկախության աստիճանը ցածր է և այն մեծ կախվածության մեջ է գտնվում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից:

ՀՀԶԾ-ի ծախսային մասը կազմվել է՝ հաշվի առնելով եկամուտների կանխատեսումները: Բյուջեների եկամտային մասի աճին զուգահեռ աճ է պլանավորվել նաև ծախսային մասում:

2021 թվականին բյուջեի փաստացի ծախսերը կազմել են 2,249,444.0 հազար դրամ: 2022 թվականին բյուջեի ծախսային մասը նախատեսվել է 2,204,160.4 հազար դրամ /նվազել է 45283.6 հազար դրամ 2021 թ-ի համեմատ/:

Ֆոնդային բյուջեում նախատեսվել են ծախսեր՝ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և հողի օտարումից մուտքերի հաշվին: 2022-2026 թվականների ընթացքում նախատեսվում են համայնքի ղեկավարի, աշխատակազմի և ՀՈԱԿ-ների աշխատակիցների աշխատավարձերի և պահպանման այլ ծախսերի բարձրացում՝ տարեկան 5%- ի չափով:

Աղյուսակ 9. Համայնքի 2021-2022թթ.բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2023-2026 թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումները

(հազ. դրամ)

Հ/հ	Մուտքերի անվանումը	2021 փաստ.	2022 նախ.	2023 կանխ.	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.
1	2	3	4	5	6	7	8
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	2460577.4	2206160.4	2316809.8	2432432.0	2554055.0	2681760.0
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	2060371.1	2026818.8	2128499.8	2234707.0	2346444.0	2463770.0
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	300912.5	345089.4	362343.9	380463.0	399487.0	419465.0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	73343.1	88182.0	92591.1	97222.0	102084.0	107190.0



	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	4376.0	500.0	525.0	552.0	580.0	610.0
	Հողի հարկ	19662.2	500.0	525.0	552.0	580.0	610.0
	Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ	49304.9	87182.0	91541.1	96118.0	100924.0	105970.0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	201910.4	227610.0	238990.5	250940.0	263487.0	276662.0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	201910.4	227610.0	238990.5	250940.0	263487.0	276662.0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	15467.0	22297.4	23412.3	24583.0	25812.0	27103.0
	Տեղական տուրքեր	15467.0	22297.4	23412.3	24583.0	25812.0	27103.0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայություն-ների մատուցումից այլ պարտադիր վճարներ	10192.0	7000.0	7350.0	7718.0	8104.0	8510.0
	Պետական տուրքեր	10192.0	7000.0	7350.0	7718.0	8104.0	8510.0
1.5	Այլ հարկային եկամուտներ						
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	1612245.5	1507354.7	1582723.0	1661860.0	1744953.0	1832200.0
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ						
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ						
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	1329772.8	1323937.9	1390135.0	1459642.0	1532624.0	1609255.0
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	1329772.8	1323937.9	1390135.0	1459642.0	1532624.0	1609255.0
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ						
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)						
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ						
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	282472.7	183416.8	192588.0	202218.0	212329.0	222945.0
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	282472.7	183416.8	192588.0	202218.0	212329.0	222945.0
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ						
3.	ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ*	147213.1	174374.7	183432.9	192384.0	202004.0	212105.0
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	40941.4	50458.1	52981.0	55630.0	58412.0	61333.0
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում	5834.6	6075.1	6717.9	6833.0	7175.0	7534.0
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	3445.2	3675.1	4197.9	4408.0	4628.0	4860.0
3.5	Վարչական գանձումներ	89617.2	117441.5	123314.0	129480.0	135954.0	142752.0
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից	978.6	400.0	420.0	441.0	463.0	486.0



3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ						
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	8760.0					
3.9	Այլեկամուտներ*, այդ թվում	1081.3					
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	112684.4					
	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ (1+2+3+4)	28649.4	2000.0	2100.0	2205.0	2315.0	2430.0
1.	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	4373.4					
4.	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	24276.0	2000.0	2100.0	2205.0	2315.0	2430.0
	Հողի իրացումից մուտքեր	24276.0	2000.0	2100.0	2205.0	2315.0	2430.0
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)	371556.9	177341.6	186210.0	195520.0	205296.0	215560.0
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)	371556.9	177341.6	186210.0	195520.0	205296.0	215560.0
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ						
2.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	371556.9	177341.6	186210.0	195520.0	205296.0	215560.0
2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում	371556.9	177341.6	186210.0	195520.0	205296.0	215560.0
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ						
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ						

Աղյուսակ 10. Համայնքի 2021-2022 թթ. բյուջեների ծախսերի ցուցանիշները և 2023-2026 թթ. բյուջեների ծախսերի կանխատեսումը (հազ. դրամ)

Հ/հ	Մուտքերի անվանումը	2021 փաստ.	2022 նախ.	2023 կանխ.	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.
1	2	3	4	5	6	7	8
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ	2249444.0	2204160.4	2314369.0	2430089.0	2551595.0	2679175.0
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	717515.2	536512.7	563338.0	591505.0	621080.0	652134.0
2	Պաշտպանություն	310.0	0.0	0.0	0.0	0.0	0.0



3	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
4	Տնտեսական հարաբերություններ	433164.7	256883.5	269728.0	283215.0	297376.0	312245.0
5	Շրջակա միջավայրի պաշտպանություն	128852.5	121216.4	127277.0	133641.0	140323.0	147339.0
6	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	215487.9	180563.4	189592.0	199072.0	209026.0	219477.0
7	Առողջապահություն	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
8	Հանգիստ, մշակույթ և կրոն	211787.8	129504.1	135980.0	142779.0	149918.0	157414.0
9	Կրթություն	496386.9	592800.3	622440.0	653562.0	686240.0	720552.0
10	Սոցիալական պաշտպանություն	40022.9	18000.0	18900.0	19845.0	20838.0	21880.0
11	Հիմնական դասերին չպատկանող պահուստային ֆոնդեր	118596.5	368680.0	387114.0	406470.0	426794.0	448134.0

Աղյուսակ 11. Համայնքի 2022-2026 թթ. բյուջեների մուտքերի և ծախսերի ցուցանիշների համեմատությունը և վերլուծությունը

հազ. դրամ

Հ/հ	Ցուցանիշի անվանումը	2022	2023	2024	2025	2026
1.	Համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերը*, այդ թվում՝	2026818.8	2128160.0	2234568.0	2346296.0	2463611.0
1.1	Վարչական բյուջեի ընդհանուր մուտքերը	1843402.0	1935572.0	2032351.0	2133967.0	2240665.0
1.2	Ֆոնդային բյուջեի ընդհանուր մուտքերը, այդ թվում՝	183416.8	192588.0	202217.0	212329.0	222946.0
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը					
2.	Համայնքի բյուջեի ընդհանուր ծախսերը, այդ թվում՝	2204160.4	2314369.0	2430087.0	2551591.0	2679171.0
2.1	Ընթացիկ ծախսեր	1931363.7	2027932.0	2129329.0	2235795.0	2347585.0
2.2	Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	275796.7	289587.0	304066.0	319270.0	335234.0
2.3	Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	-3000.0	-3150.0	-3308.0	-3474.0	-3648.0
3.	Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդ*, այդ թվում՝	368680.0	387114.0	406470.0	426794.0	448134.0
3.1	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ	368680.0	387114.0	406470.0	426794.0	448134.0
3.2	Ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդ	0	0	0	0	0

*) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր մուտքերի մեջ

2.6 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

- **Կրթական համակարգի անհամաչափ զարգացումը համայնքի բնակավայրերում**

Վերջին տարիներին նախկին համայնքապետարանները հիմնականում ինքնապահպանման խնդիր են լուծել. նախադպրոցական, արտադպրոցական կրթության կազմակերպում փոքր համայնքներում չի իրականացվել: Մարզական և մշակութային կենտրոններ գործել են միայն Արթիկ քաղաքում, իսկ գյուղական բնակավայրերի երեխաները լուրջ դժվարություններ ունեն իրենց հոգևոր, ֆիզիկական և գեղագիտական լիարժեք զարգացումն ապահովելու հարցում:

- **Միջբնակավայրային տրանսպորտային երթուղիների ոչ բավարար քանակությունը**

Արթիկ համայնքի ներքին գոտու ոչ բոլոր բնակավայրերում կան համայնքի կենտրոնին և միմյանց կապող երթուղիներ, մինչդեռ բնակավայրերի միջև հեռավորությունները 3-2 կմ են: Տրանսպորտի բացակայությունը սոցիալ-տնտեսական լուրջ դժվարություններ է առաջացնում բնակչության համար: Ամբողջ տարածաշրջանում բանկեր կան միայն Արթիկ քաղաքում: Բնակչությունը բանկ հասնելու և ծառայությունից օգտվելու համար պետք է անցնի 12-14 կմ ճանապարհ, հարկ է լինում օգտվել մասնավոր մեքենաներից, որոնք ոչ բոլորին են հասանելի: Տրանսպորտի խնդիրը հատկապես առաջնային է գյուղական դպրոցներում դասավանդող ուսուցիչների համար:

- **Գյուղատնտեսության զարգացման համար առկա ռեսուրսների ոչ լիարժեք օգտագործումը և գյուղատնտեսական բիզնեսի թերզարգացվածությունը**

- Գյուղատնտեսական բիզնեսի թերզարգացվածությունը և ոլորտում առկա ռեսուրսների ոչ լիարժեք օգտագործումը պայմանավորված են մի շարք հանգամանքներով, որոնցից հարկ է առաձնացնել.



- ✓ Հետբերքահավաքային անհրաժեշտ գործընթացի բացակայությունը, որն իր մեջ ներառում է պահեստավորումը և տեսակավորումը: Սա հանգեցնում է հսկայական հետբերքահավաքային կորուստների: Երբեմն առանց գների շուրջ բանակցելու՝ գյուղացիները ստիպված են լինում վայրկյան առաջ վաճառել բերքը՝ փչանալուց խույս տալու նպատակով:
- ✓ Տեղական մակարդակում գյուղմթերքի վերամշակման ոլորտում նորարարական բիզնես մոդելների բացակայությունը և ներդրումների սակավությունը, որը թերևս պայմանավորված է այնպիսի գործոնների բացակայությամբ, ինչպիսիք են գիտելիքը, տեղեկատվությունը և տեխնոլոգիաները:
- ✓ Արտահանման փոքր հնարավորությունները, պոտենցիալ շուկաներից հեռու գտնվելը:

- **Զբոսաշրջային ներուժի ոչ ռացիոնալ օգտագործումը և համապատասխան ենթակառուցվածքների սակավությունը**

Համայնքն իր աշխարհագրական դիրքով, պատմամշակութային և ազգագրական առանձնահատկություններով ունի զբոսաշրջային կենտրոն դառնալու լավ հնարավորություններ: Լուրջ նախադրյալներ կան պատմական տուրիզմի զարգացման համար: Համայնքը մինչ օրս չի օգտագործել իր զբոսաշրջային պոտենցիալը: Ուշադրության են արժանի ոլորտի զարգացման հետևյալ խոչընդոտները.

- ✓ Արթիկն գրագետ կերպով գովազդող օնլայն հարթակի, համայնքում տուրիստական գործակալության, ինչպես նաև օտարալեզու քարտեզի բացակայությունը:
- ✓ Համապատասխան ենթակառուցվածքների՝ ավանդական ոճի հյուրատների, երկրագիտական, էթնոգրաֆիկ թանգարանների բացակայությունը:
- ✓ Համայնքում կան բազմաթիվ ճարտարապետական հուշարձաններ, սակայն ունենք զբոսավարների պակաս, որը և թույլ չի տալիս մեր համայնքի ճանաչելիությունն ապահովել հանրապետությունում և դրանից դուրս:

• ***Միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհների անբարեկարգ վիճակը***

Համայնքում ճանապարհաշինության ոլորտը մեծածավալ ներդրումներ է պահանջում: Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն ունի հյուսիս-հարավ մայրուղու կառուցումը: Համայնքի գյուղական բնակավայրերի ճանապարհների զգալի մասը ձմռան ամիսներին դառնում են ձյունածածկ ու անանցանելի: Հետևաբար, ճանապարհների մաքրման և ճանապարհային սպասարկման որակի բարելավման խնդիրները ևս առաջանահերթ լուծում են պահանջում:

• ***Ոռոգման ջրի ջրագծերի բացակայությունը և առկա ջրագծերի մաշվածությունը***

Համայնքի բնակավայրերից շատերը չունեն ոռոգման կիսախողովակներով հագեցվածություն, այն ոռոգվում է դեռևս հողային առուներով, որը և բերում է ոռոգման ջրի մեծածավալ կորստի:

• ***Համայնքի բժշկական կենտրոնում մասնագետ բժիշկների պակասը***

Համայնքի առողջապահության ոլորտում շարունակում է առաջնային մնալ կադրային խնդիրը: Արթիկի «Առողջության կենտրոն» ՓԲԸ-ի շենքն ունի վերանորոգման կարիք, և նախատեսվում է նոր մասնաշենքի կառուցում: Ունի նեղ մասնագիտացված բժիշկների խիստ կարիք: Բուժժառայություններից օգտվելու համար բնակիչները հաճախ ստիպված են լինում գնալ մարզկենտրոն կամ մայրաքաղաք: Խնդիրը պայմանավորված է բուժաշխատողների աշխատանքի վարձատրության ցածր մակարդակով: Մարզում մասնագիտական աճի նվազ հնարավորություններով և ժամանակակից բժշկական սարքավորումներով: Այս հիմնախնդրի լուծման համար ակնկալվում է առողջապահության նախարարության միջամտությունը:

• ***Աղբահանության և սանիտարական մաքրման ենթակառուցվածքների գրեթե բացակայությունը***

Կենտրոնացված աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացվում է Արթիկ քաղաքում և 23 գյուղերում, իսկ աղբի տեսակավորում և վերամշակում համայնքի որևէ բնակավայրում չի իրականացվում: Սանիտարական նորմերին հանապատասխանող աղբավայրեր համայնքում չկան: Դրանք ավելի շուտ աղբաթափման վայրեր են, որոնք որոշ գյուղական բնակավայրերում նույնիսկ գտնվում են գյուղի տարածքում: Այս ոլորտում նախատեսվում է ցուցաբերել համալիր մոտեցում՝ աղբահանության համակարգի բարելավման և համապատասխան ենթակառուցվածքների ստեղծման ուղղությամբ:



• **Հակակարկտային կայանքների առկայությունը և բացակայությունը**

Հ/Հ	Բնակավայր	Կարկտակայանների թվաքանակ /հատ/
1	Սպանդարյան	4
2	Փանիկ	3
3	Անուշավան	4
4	Մեղրաշեն	5
5	Լեռնակերտ	1
6	Մեծ Մանթաշ	2
7	Գեղանիստ	6
8	Լուսակերտ	6
9	Հովտաշեն	3
	Ընդամենը	34

• **Համայնքի 14 բնակավայրեր դեռևս չունեն հակակարկտային կայաններ**

• **Գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածությունը և քիչ քանակը**

Սա լուրջ խոչընդոտ է հանդիսանում հողատարածքների որակյալ և արդյունավետ մշակման համար: Գյուղատնտեսության ձեռներեցության զարգացման հիմնական դժվարություններից են նաև գյուղատնտեսական աշխատանքների կատարման բարձր գները և ոռոգման ցանցի մաշվածությունը: Ջրի առկայությունը հնարավորություն կտար զարգացնել բանջարաբուստանային կուլտուրաների մշակության ընդլայնումը: Համայնքն ունի նաև գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման և իրացման խնդիրներ: Իրացման խնդիրներից մեկն էլ այն է, որ գյուղատնտեսական արտադրանքը շատ հաճախ վաճառվում է գյուղացիների համար ոչ շահավետ գներով:

2.7 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Աղյուսակ 12. Համայնքի ՈւԹՀՍ վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Տուֆ քարի, պեմզանյութի, բազալտի հանքակույտի, շինարարական ավազի-շեբենի և կավի մեծ պաշարների առկայությունը • Բերրի վարելահողերի առկայությունը • Արտեզյան և ինքնահոս ջրերի առկայությունը • Ախուրյանի ջրամբարին մոտ գտնվելը և Մանթաշի ջրամբարի առկայությունը • Արմավիր-Գյումրի և Երևան-Գյումրի մայրուղիներին մոտ գտնվելը • Պատմամշակութային հուշարձանների առկայությունը • Ֆերմերային անասնապահական տնտեսությունների	 • Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները • Համայնքի բնակչության սոցիալական անապահով վիճակը և ցածր կենսապայմանները • Գործազրկության բարձր մակարդակը • Արտագաղթը • Ոռոգման ջրի ջրագծերի բացակայությունը և առկա ջրագծերի մաշվածությունը • Գյուղատնտեսական տեխնիկայի սակավությունը և մաշվածությունը • Արդյունաբերության ցածր մակարդակը • Գյուղատնտեսական արտադրանքի սպառման և արտահանման



առկայությունը • Քարմշակ վարպետների և արհեստավորների առկայությունը	համար սակավ հնարավորությունները • Զբոսաշրջության ոչ բավարար մակարդակը • Ներբնակավայրային տրանսպորտի բացակայությունը • Ներբնակավայրային ճանապարհների վատ վիճակը, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների քայքայվածությունը • Ձմեռային ամիսներին ճանապարհների դժվարանցանելիությունը • Բազմաբնակարան շենքերի մաշվածության բարձր աստիճանը • Հակակարկտային կայանքների քիչ քանակությունը
--	---



Հնարավորություններ

- Մանթաշի ջրամբարի ջրային մեծ պաշարների բազայի վրա ոռոգման համակարգի կառուցում, դաշտավարության և անասնապահության ճյուղերի զարգացում
- Տուֆ քարի հանքավայրերի շահագործման ծավալների ավելացման և վերամշակման ճյուղի զարգացման միջոցով նոր աշխատատեղերի ստեղծում
- Գյուղատնտեսական տեխնիկայի նորացումը կնպաստի դաշտավարության զարգացմանը
- Հակակարկտային կայանքների տեղադրումը կնպաստի գյուղատնտեսության զարգացմանը
- Համայնքում առկա պատմամշակութային արժեքների և որոշ բնակավայրերի տարածքից տեսանելի պատմական Արթիկ համայնքի պատմամշակութային հուշարձանների բազայի վրա տուրիզմի զարգացումը,
- Տեխնոպարկի կառուցումը կնպաստի երեխաների կրթության և ստեղծարարության զարգացմանը
- Զբոսայգիներ, հանգստի, ժամանցի գոտիների ստեղծումով կնպաստի համայնքի գրավչությանը
- Ջերմոցային տնտեսությունների ավելացումը
- Զբոսաշրջային նշանակության ճանապարհներին եռալեզու ուղեցույցների տեղադրում

Սպառնալիքներ (վտանգներ)

- Տարերային բնական աղետները
- Բնակչության սոցիալ-տնտեսական վատ վիճակը նպաստում է արտագաղթին
- Գործազրկության բարձր մակարդակը
- Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները, որը մեծ վտանգ է առաջացնում բյուջեի կատարման համար
- Վարելահողերի մի մասի չմշակելու հետևանքով հողերի որակազրկումն ու քայքայումը
- Ներբնակավայրային փողոցներում և ճանապարհներում ջրահեռացման հեղեղատների բացակայության պատճառով դրանց վիճակի էլ ավելի վատթարացման վտանգը
- Ապաստարանների քիչ քանակը
- Սպանդարյան, Գեղանիստ, Արևշատ, Մեծ Մանթաշ, Փոքր Մանթաշ գյուղերի խմելու ջրի համար գտման կայանի բացակայություն և նշված գյուղերի ջրատարի 5 կիլոմետրանոց խողովակի բաց վիճակի գտնվելը



• ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ



Արթիկ համայնքի տարածքը կազմում է **48541.96 հա**, որից գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են **41387.8799 հա**, տնամերձ հողերը՝ **2946.0998 հա**, արտադրական նշանակության հողերը **1109.3165 հա**, էներգետիկայի, տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակայության հողերը՝ **167.1066 հա**, անտառային հողերը՝ **870.597 հա**, հատուկ պահպանության հողերը՝ **336.53 հա**, հատուկ նշանակության հողերը՝ **152.65 հա** և ջրային հողերը՝ **416.6768 հա**:

1991 թվականին հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհման ժամանակ համայնքի բնակավայրերում սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափն ըստ բնակավայրերի ներկայացված է **աղյուսակ 13-ում**:

Աղյուսակ 13. Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերում սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Մեկ հողաբաժնի չափը
1	Արթիկ	0,18 հա
2	Անուշավան	0,70 հա
3	Արևշատ	0,37 հա
4	Գեղանիստ	1,01 հա
5	Գետափ	0,7 հա
6	Լեռնակերտ	1.0 հա
7	Լուսակերտ	0,7 հա
8	Հայկասար	2.3 հա
9	Հայրենյաց	2,2 հա
10	Հադիձ	0,62 հա
11	Հոռոմ	1,4 հա
12	Հովտաշեն	1,6 հա
13	Մեծ Մանթաշ	0,87 հա
14	Մեղրաշեն	1,53 հա

15	Նահապետավան	0,58 հա
16	Նոր Կյանք	0,80 հա
17	Պեմզաշեն	0,41
18	Սարալանջ	1,15 հա
19	Սարատակ	1.0 հա
20	Սպանդարյան	0,82 հա
21	Վարդաքար	1,6 հա
22	Տուֆաշեն	2,24 հա
23	Փանիկ	0,70 հա
24	Փոքր Մանթաշ	0,125 հա

Համայնքի հողային հաշվեկշիռն ըստ առանձին բնակավայրերի ներկայացված է **հավելված 5**-ում:

• **ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**



Համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում ցանվում են հացահատիկային մշակաբույսեր՝ ցորեն, գարի և այլ կուլտուրաներ: Սակայն հողատարածքների ջրովի չլինելու պատճառով համայնքաբնակները մեծ եկամուտներ չեն ստանում: Հողատեսքերի դիրքադրությունը միանգամայն բարենպաստ է հացահատիկային կուլտուրաների, կարտոֆիլի արտադրության ու անասնապահության համար: Հացահատիկային կուլտուրաների արտադրությունն ու անասնապահությունը հանդիսանում են Արթիկ համայնքի տնտեսական զարգացման կանխորոշ ողորտ: Սակայն այս ոլորտները ներկայումս ունեն միջին զարգացվածության տեմպ, որը պայմանավորված է ոլորտների ցածր կապիտալացման աստիճանով ու վերամշակման տեխնոլոգիաների բացակայությամբ:

Համայնքաբնակները զբաղվում են անասնապահությամբ, հիմնականում խոշոր՝ 13585 գլուխ և մանր եղջերավոր՝ 7155 գլուխ, խոզոր՝ 1560 գլուխ:

Սակավաթիվ են խոշոր ֆերմերային տնտեսությունները: Հիմնականում յուրաքանչյուր տնտեսություն իր արտադրանքը սպառում է իր տնտեսության ներսում: Համայնքաբնակներն իրենց տնամերձ հաղամասերում աճեցնում են բանջարաբոստանային կուլտուրաներ և պտուղներ՝ խնձոր, սալոր, տանձ, բալ:

Հավելված 6-ում ներկայացված է համայնքում առկա անասնազլխաքանակի վերաբերյալ տվյալներն՝ ըստ համայնքի կազմի մեջ մտնող առանձին բնակավայրերի:

• *ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ*



Համայնքում շրջակա բնական միջավայրի պահպանության առումով առաջնային խնդիր է համայնքի սանմաքրումը: Արթիկի կազմի մեջ մտնող ոչ մի բնակավայր չունի կոյուղաջրի մաքրման կայան: Համայնքում բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- կառուցել նոր կոյուղագիծ:
- ավելացնել համայնքի կանաչապատ տարածքները,
- կառուցել և բարեկարգել զբոսայգիները,
- ունենալ կենտրոնացված աղբավայր,
- աղբավայրում ստեղծել աղբի տեսակավորման հնարավարություն,
- համայնքի փողոցներում իրականացնել ծառատունկ,
- ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների, տեսագովազդների, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

Աղյուսակ 13. Համայնքի ՈւԹՀՍ վերլուծություն՝ ըստ բնակավայրերի



Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
--------------	--------------



- **Արթիկ** - Երևան-Գյումրի մայրուղուն մոտ գտնվելը, բանկերի, ՈՒՎԿ-ների առկայությունը, քաղաքում գտնվող պետական հիմնարկների առկայությունը, զբոսայգիների առկայությունը, տուֆ քարի մեծ պաշարների առկայությունը, բջջային օպերատորների և ինտերնետ կապի առկայությունը, քաղաքի գազաֆիկացված լինելը, խմելու ջրի ներքին ցանցի առկայությունը, լուսավորության խիտ ցանց, արտադրարժեքի դաստիարակության կենտրոնների առկայությունը, պատմամշակութային ու բնական հարուստ ժառանգության առկայություն, մշտապես գործող եկեղեցի և ակտիվ եկեղեցական կյանք, փոքր և միջին բիզնեսում բնակչության ներգրավվածությունը, 600 ԿՎՏ հզորությամբ արևային կայանի առկայությունը, տարանցիկ ճանապարհների առկայությունը, որը կապում է Լոռու և Արագածոտնի մարզերը:
- **Պեմգաշեն** - Զարգացած հանքարդյունաբերություն, տուֆ քարի մեծ պաշարների առկայություն, զբոսայգու, հանգստի, ժամանցի գոտիների առկայություն, պատմամշակութային ու բնական հարուստ ժառանգության առկայություն, բերրի վարելահողերի առկայությունը: Վերանորոգված նախակրթարան և արվեստի դպրոց, լուսավորության խիտ ցանց, բնակավայրում քաղաքացիների հանրային և քաղաքական ակտիվ կյանքի ներգրավվածություն, զբոսաշրջության մեծ պոտենցիալ հյուրատան առկայություն, մշտապես գործող եկեղեցի և ակտիվ եկեղեցական կյանք, փոքր և միջին բիզնեսում բնակչության ներգրավվածությունը
- **Լեռնակերտ** - Պատմամշակութային ու բնական հարուստ ժառանգության առկայությունն ու մշակութային հարուստ ավանդույթները, փոքր և միջին բիզնեսում բնակչության որոշակի ներգրավվածությունը, ջրային ռեսուրսների բավարար առկայությունը, մարդկային և աշխատանքային ռեսուրսների բավարար առկայություն, լուսավորության ցանցի առկայություն
- **Վարդաքար** - Ոռոգման համակարգի ցանցի առկայություն պոմպակայանով, խմելու ջրի 24 ժամայա ապահովում, հանրային տրանսպորտի հասանելիություն

- **Արթիկ** - բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները, հակակարկտային կայանների բացակայությունը, սելավատարի որոշ հատվածների անբարեկարգ վիճակը, քաղաքի բնակչության սոցիալապես անապահով վիճակը, ներքին տրանսպորտային երթուղիների բացակայությունը, ոռոգման ջրի բացակայություն, կանաչ գոտիների քիչ քանակը, գործազրկության բարձր մակարդակը
- **Պեմգաշեն** - Ոչ շուրջօրյա ջրամատակարարում, չգործող երկաթուղի, ոռոգման ջրի բացակայություն, չմաքրված սելավատարների, պատմամշակութային հուշարձանների պահպանում և վերականգնում, հակակարկտային կայանի բացակայություն
- **Լեռնակերտ** - Գործազրկության բարձր մակարդակը և աշխատատեղերի պակասը, գյուղատնտեսական գործունեության համար պիտանի հողերի սակավություն, բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների ցածր մակարդակ, գյուղատնտեսական մթերքների իրացման դժվարություններ
- **Վարդաքար** - Հակակարկտային կայանների բացակայությունը, գյուղի բնակչության սոցիալական անապահով վիճակը և ցածր կենսապայմանները, գյուղացիական տնտեսությունների արտադրական փոքր կարողությունները, գյուղատնտեսական տեխնիկայի պակասը և մաշվածությունը, մանկապարտեզի, սպորտդահլիճի և մանկական խաղահրապարակների բացակայությունը
- **Նոր Կյանք** - Զրամբարի բացակայություն, ոռոգման ցանցի



- **Նոր Կյանք** - Փոքր և միջին բիզնեսներում բնակչության որոշակի չափով ներգրավվածությունը, շուրջօրյա ջրամատակարարում, գազաֆիկացում, փողոցային գիշերային լուսավորության ցանցի առկայություն, ֆոտովոլտային կայան 10կ/վ հզորությամբ
- **Հոռում** - Պատմամշակութային ու բնական հարուստ ժառանգության առկայություն և մշակութային հարուստ ավանդույթներ, բերրի վարելահողերի առկայությունը
- **Անուշավան** - Վերանորոգված նախակրթարանի առկայություն, հակակարկտային կայանի առկայություն, գիշերային լուսավորության զարգացած ցանց, ֆոտովոլտային կայան 35 կվտ հզորությամբ, խմելու ջրի ներքին ցանց կառուցված 80 տոկոս և առկա 1 ՕՎԿ
- **Փանիկ** - Մշակութային հարուստ ավանդույթներ, «Փանիկի Տիրամայր եկեղեցին»-ին և եկեղեցուն կից օրատորիան, «Փանիկի առողջապահական կենտրոն» ՊՈԱԿ առկայությունը, հացահատիկային, բանջարաբոստանային կուլտուրաների, պտղի արտադրության համար բնակլիմայական բարենպաստ պայմաններ
- **Մեծ Մանթաշ** - գյուղը ունի 1030 աշխատողի ներուժ, որը կարող է տարեկան տալ 4030 տոննա բնամթերք, մարզում լավագույններից մեկը հանդիսացող միջնակարգ դպրոց, վերապատրաստված մասնագետներով առողջության կենտրոն
- **Տուֆաշեն** - Բերրի վարելահողերի առկայությունը, զարգացած հանքարդյունաբերություն, տուֆ քարի արտադրության և վերամշակման ձեռնարկությունների առկայությունը, համայնքում բարձրագույն կրթություն ունեցողների բավարար թիվ
- **Լուսակերտ** - գյուղում հողատարածքներն ապահովված են կարկտակայաններով, գյուղը գտնվում է Երևան-Գյումրի մայրուղու հարևանությամբ, գյուղի ճանապարհները հիմնականում

կառուցում, մշակույթի տան կառուցում, արվեստի դպրոցի կառուցում

- **Հոռում** - Գործազրկության բարձր մակարդակը և աշխատատեղերի պակասը, համայնքի ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակը, բնակարանի կարիք ունեցող երիտասարդ ընտանիքների մեծ թիվը, բիզնես ոլորտի համար ոչ բարենպաստ քաղաքականությունը, թերի իրազեկվածությունը պատմամշակութային վայրերի, ինչպես նաև համայնքում գործող զբոսաշրջային և հասարակական կառույցների վերաբերյալ
- **Անուշավան** - ոռոգման փակ համակարգի և ոռոգման ներքին ցանցի կառուցում: Անուշավան-Կաղաստրային քարտեզի անձշտությունների ուղղում, գյուղի երկրորդական փողոցների սալապատման աշխատանքներ, սելավատարի մաքրման աշխատանքներ, ոռոգման փակ համակարգի և ոռոգման ներքին ցանցի կառուցում, գյուղատնտեսական տեխնիկայի մշակվածություն, մշակույթի տան մարզադահլիճի և միջնացքի նորոգման աշխատանքներ, բնակլիմայական ոչ բարենպաստ պայմաններ, դպրոցի բակի անմխիթար վիճակ:
- **Փանիկ** - Բնական աղետների՝ երկրաշարժ, ցրտահարություն, երաշտ, կարկտահարության, ջրհեղեղների վտանգ, համայնքի ենթակառուցվածքների՝ երկրորդական և դաշտամիջյան փողոցների, ոռոգման ներքին ցանցի, համայնքային ենթակառուցության տակ գտնվող շենք-շինությունների ոչ բավարար վիճակ
- **Մեծ Մանթաշ** - բնակավայրում մեծ թիվ են կազմում արտագնա աշխատանքային միգրանտները, բնակավայրի համար մշտական խնդիր է խմելու և ոռոգման ջրի հասանելիությունը, գործազրկության բարձր մակարդակը և աշխատատեղերի պակասը, գյուղի ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակը, բիզնես ոլորտի համար ոչ բարենպաստ քաղաքականությունը
- **Տուֆաշեն** - Գործազրկության բարձր մակարդակ և աշխատատեղերի պակաս, համայնքի ենթակառուցվածքների երկրորդական փողոցների, խմելու ջրի ջրամատակարարման ցանցի ոչ բարենպաստ վիճակ, ոռոգման ջրի բացակայություն
- **Լուսակերտ** - Ոչ բարենպաստ բնակլիմայական պայմաններ մասնավորապես տեղումների քիչ քանակ



- ասֆալտապատված է, ապահովված է խմելու 24 ժամայա ջրամատակարարմամբ, ապահովված է ոռոգման փակ խողովակների ցանցով
- **Արևշատ-** Բերրի վարելահողերի առկայությունը՝ զարգացած բանջարանաբուստանային կուլտուրաների մշակմամբ, զարգացած է խոշոր եղջերավոր անասնապահությունը, ինչպես նաև զբաղվում են ջերմոցային տնտեսություններով, բերքը վաճառվում է բնակիչների կողմից
 - **Հայկասար** – գյուղը գազաֆիկացված է բարձր ճնշման գազատար խողովակներով, բերրի վարելահողերի առկայությունը, փողոցային լուսավորություն լեղ համակարգով
 - **Հայրենյաց** – Գյուղատնտեսության զարգացման համար առկա է բերրի հողային մեծ ռեսուրսներ, համեմատաբար բարենպաստ կլիմա, պատմամշակութային հուշարձանների առկայությունը՝ եկեղեցի, մատուռ, սրբատեղիներ, գյուղատեխնիկայով հագեցվածություն, միջհամայնքային ճանապարհների բարվոք վիճակ, գիշերային լուսավորության և գազամատակարարման ցանցի առկայությունը
 - **Սարատակ** – Բերրի վարելահողերի առկայությունը, պատմամշակութային հուշարձանների առկայությունը
 - **Սարսլանջ** – Բերրի վարելահողերի առկայությունը, գազամատակարարման ցանցի առկայությունը
 - **Գեղանիստ** – Գյուղում խմելու ջրի ներքին ցանցի առկայություն, տնամերձ հողատարածքների ոռոգման հնարավորություն, գյուղատնտեսական տեխնիկաների բավարար քանակ
 - **Նահապետավան** – գյուղում զարգացած են անասնապահությունը և հողագործությունը, փոքր ու միջին բիզնեսում բնակչության որոշակի ներգրավվածությունը, ջրային բնական աղբյուրների առկայություն

- **Արևշատ-** Գյուղի 50 տոկոսը գազաֆիկացված չէ, առկա են ոռոգման ջրի խնդիրներ սեզոնային ջրառի ժամանակ, գյուղամիջյան և հանդամիջյան վատ ճանապարհներ, խմելու ջրի ներքին ցանցի անմխիթար վիճակ
- գյուղատնտեսական նշանակության հողերի բացակայությունը, բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները, բարձր սեյսմիկ գոտում գտնվելը, մշակույթի տան, մանկապարտեզի և գրադարանի շենքերի քայքայված ու անբարեկարգ վիճակը, հանգստի գոտու բացակայությունը, ներբնակավայրային ճանապարհների քայքայված ու անբարեկարգ վիճակը, պոմպակայանը վերանորոգման կարիք ունի 30 հա տարածքը ոռոգելու համար
- **Հայկասար** – Գյուղում առկա ջրամատակարարման խողովակաշարը գտնվում է մաշված վիճակում և կարիք ունի արդիականացման, գյուղը կոյողի չունի, գյուղում արոտավայրերը քիչ են և չկան պայմաններ անասնապահության զարգացման համար
- **Հայրենյաց** – Ոռոգման ջրի բացակայություն, արոտավայրերում անասունների խմելու ջրի բացակայություն, գյուղմթերքի վերամշակման և իրացման խնդիրներ, գործազրկության բարձր մակարդակ, հակակարկտային կայանների բացակայություն, մանկապարտեզի բացակայություն, սպասարկման ոլորտի ծառայությունների բացակայություն:
- Սարատակ – Դաշտամիջյան ճանապարհների վատ վիճակ, լուսավորության ոչ լիարժեք ցանց, պատմամշակութային հուշարձանների վերանորոգում, ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում և փոսալցում, ոռոգման ցանցի կառուցում:
- **Սարսլանջ** – Ոռոգման համակարգի բացակայություն, գյուղամիջյան ճանապարհների վատ վիճակ, մանկապարտեզի բացակայություն, հակակարկտային կայանի բացակայություն:
- **Գեղանիստ** – ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների ոչ բարեկարգ վիճակ, մշակույթի տան վթարային վիճակ, դպրոցի շենքի անմխիթար վիճակ, աշխատատեղերի բացակայություն, գյուղի առանձին թաղամասերի գազաֆիկացված չլինելը:
- **Նահապետավան** – Գործազրկության բարձր մակարդակ և աշխատատեղերի պակաս, գյուղի ենթակառուցվածքների փողոցների և ջրամատակարարման ցանցի ոչ բարվոք վիճակ, բնակարանի կարիք ունեցող երիտասարդ ընտանիքների մեծ թիվ, բիզնես ոլորտի համար ոչ բարենպաստ քաղաքականություն
- **Հովտաշեն** – Ոչ զարգացած անասնապահություն, մանկապարտեզի բացակայություն, դաշտամիջյան ճանապարհների վատ վիճակ, գործազրկության բարձր մակարդակ և աշխատատեղերի պակաս



- **Հովտաշեն** - Գազամատակարարման ցանցի առկայությունը, ոռոգման համակարգի ցանցի առկայություն, բերրի վարելահողերի առկայությունը
- Հատիճ**- Տուֆ քարի և շինարարական ավազի առկայություն, մանկապարտեզի առկայություն, արվեստի դպրոցի և մշակույթի տան առկայություն, Հատիճի միջնադարյան եկեղեցու ընծայարանի և այլ պատմամշակութային հուշարձանների առկայություն: ՈՒՆԻ խմելու ջուր և գազաֆիկացում:
- **Սպանդարյան** - Համայնքի աշխարհագրական լավ դիրքը (մոտիկությունը մարզկենտրոն Գյումրիին, տարածաշրջանային կենտրոն Արթիկին, տարածքով անցնող հանրապետական նշանակության Գյումրի- Արթիկ- Երևան ճանապարհը), համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման, համայնքի խմելու ջրի նոր կառուցվող ներհամայնքային համակարգերի առկայությունը, համայնքի տարածքում պատմամշակութային հուշարձանների առկայությունը
- **Գետափ** - գյուղում զարգացած են անասնապահությունը և հողագործությունը, փոքր ու միջին բիզնեսում բնակչության որոշակի ներգրավվածությունը, ջրային բնական աղբյուրների առկայություն
-
- **Փոքր Մանթաշ** - Բերրի վարելահողերի առկայությունը, պատմամշակութային հուշարձանների առկայությունը
-
- **Մեղրաշեն** - Զարգացած մեղվաբուծություն, ոլորտին բնորոշ հարակից արտադրատեսակների արտադրությամբ, երկաթգծի առկայություն՝ կայարանով և բեռնաթափման կետով, բերրի վարելահողերի առկայություն, ֆերմերային հզոր տնտեսություններ, գյուղմթերքի արտադրության և վերամշակման հնարավորություններով
- **Մեծ Մանթաշ**- Գյուղում ստեղծել լուրջ նախադրյալներ և նպաստավոր պայմաններ ժողովրդագրական աճի, սոցիալ-տնտեսական և տեղական ժողովրդավարության զարգացման համար՝ հիմնելով նոր աշխատատեղեր, ավելացնելով ընտանիքների եկամուտները և բարձրացնելով բնակչության ընդհանուր կենսամակարդակը, հաղթահարելով աղքատությունը և կանխելով արտագաղթը

Հատիճ - Ոռոգելի վարելահողերի բացակայություն, բնակլիմայական ոչ բարենպաստ պայմաններ, գյուղտեխնիկայի պակաս և առկա տեխնիկայի մաշվածություն,գործազրկության բարձր մակարդակ:

- **Սպանդարյան** - Ոռոգելի վարելահողերի բացակայությունը, բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները, ներբնակավայրային և դաշտամիջյան ճանապարհների քայքայվածությունը գործազրկության բարձր մակարդակ և աշխատատեղերի պակաս
- **Գետափ** - Գործազրկության բարձր մակարդակ և աշխատատեղերի պակաս, գյուղի ենթակառուցվածքների՝ փողոցների և ջրամատակարարման ցանցի ոչ բարվոք վիճակ, բնակարանի կարիք ունեցող երիտասարդ ընտանիքների մեծ թիվ
- **Փոքր Մանթաշ** - Դաշտամիջյան ճանապարհների վատ վիճակ, լուսավորության ոչ լիարժեք ցանց, պատմամշակութային հուշարձանների վերանորոգում
- **Մեղրաշեն** - Գազաֆիկացման ներքին ոչ լիարժեք ցանց, փողոցային լուսավորության ոչ լիարժեք ցանց, գյուղմտնող և ներհամայնքային ճանապարհների ցածր որոկ
- **Մեծ Մանթաշ** - գյուղի ներքին փողոցներում և ճանապարհներում ջրահեռացման համակարգերի բացակայության պատճառով դրանց վիճակի էլ ավելի վատթարացման վտանգը, աղբավայրի բացակայության պատճառով համայնքի տարածքում բնության ու շրջակա միջավայրի աղտոտման և վնասման վտանգը



Հնարավորություններ	Սպառնալիքներ (վտանգներ)
• Արթիկ- հակակարկտային կայանների տեղադրում, գյուղտեխնիկայի համար տեխնոպարկի կառուցում, հյուսիս-հարավ միջպետական նշանակության ճանապարհի կառուցումը • Գործարանային շենքերի և շինությունների, տարածքների առկայություն, որոնք կարող են համատեղվել նոր ներդրումային նպատակների համար: • Պեմգաշեն - Պատմամշակութային հարուստ ժառանգության հիմքի վրա ներգնա և արտագնա տուրիզմի զարգացում, դաշտավարության և անասնապահության ճյուղերի զարգացում, մեղվապահության ճյուղի զարգացում, հին և չգործող թեթև արդյունաբերական արտոդրամասերի գործարկում, տուֆ քարի հանքավայրերի շահագործման ծավալների ավելացման և վերամշակման ճյուղի զարգացման միջոցով նոր աշխատատեղերի ստեղծում • Լեռնակերտ- Գյուղատնտեսական տեխնիկայի նորացումը կնպաստի դաշտավարության զարգացմանը, գյուղում առկա պատմամշակութային արժեքների և տարածքից տեսանելի պատմական Անի մայրաքաղաքի ավերակների բազայի վրա տուրիզմի զարգացումը • Վարդաքար- Պոմպակայանի արդիականացման միջոցով գյուղի ոռոգման և կենցաղային ջրի մատակարարման ծավալների ավելացմամբ ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում • Նոր Կյանք - Վարդաքարի ջրամբարի ջրային ռեսուրսների բազայի վրա եղած ոռոգման համակարգի ցանցի վերազինում և նորի կառուցում, որի հաշվին	• Արթիկ- երիտասարդ ընտանիքների արտագաղթը, վարելահողերի մի մասը չմշակելու հետևանքով հողերի որակազրկումն ու քայքայումը, բնական և տեխնածին աղետների սպառնալիքները, գյուղատնտեսական արտադրանքի սպառման և արտահանման համար սակավ հնարավորությունները, գործազրկության բարձր մակարդակը • Արտագնա աշխատանքի մեկնողների մեծ թիվ: • Երիտասարդների արտահոսք դեպի մայրաքաղաք կամ արտերկիր: • Պեմգաշեն - Բնական տարրերային աղետները, երիտասարդ ընտանիքների արտագաղթը, գործազրկության բարձր մակարդակը • Լեռնակերտ - Բնական տարրերային աղետների հնարավոր պատճառած վնասները (երկրաշարժ, հեղեղումներ, կարկտահարություն) արտագաղթը, հատկապես երիտասարդների շրջանում, գործազրկության բարձր մակարդակը • Վարդաքար- Բնակլիմայական աղետներ, արտագաղթի աճ, գործազրկության բարձր մակարդակ • Նոր Կյանք- Սեյսմիկ գոտում գտնվելու հանգամանքը, մեծ



ոռոգման հողատարածքների ավելացում: Գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնմամբ կստեղծվեն նոր աշխատատեղեր • <u>Հոռոմ</u>- Պատմամշակութային ու բնական հարուստ ժառանգության առկայության և մշակութային հարուստ ավանդույթների հիման վրա ներգնա տուրիզմի զարգացում հյուրատների կառուցում • <u>Անուշավան</u> - Բերրի վարելահողերի առկայության բազայի հիմքի վրա ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը, և ջերմոցային տնտեսություններ հիմնելու մեծ պոտենցիալ: Գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնմամբ կստեղծվեն նոր աշխատատեղեր • <u>Հառիճ</u>- Տուֆ քարի և շինարարական ավազի առկայություն հիմքի վրա արտադրական ծավալների ավելացումով աշխատատեղերի ավելացում, Հառիճի միջնադարյան եկեղեցու ընծայարանի և այլ պատմամշակութային հուշարձանների առկայություն և տուրիստական հոսքի շատացում • <u>Լուսակերտ</u>- Գյուղատնտեսական տեխնիկայի նորացումը կնպաստի դաշտավարության զարգացմանը, իսկ սառնարանային արտադրամասի կառուցմամբ հնարավորություն կընձեռի ստացված բերքը ոչ սեզոնային վաճառքի և բարձր շահույթի ապահովում • <u>Հայկասար</u>- Ոռոգման համակարգի կառուցում, դաշտավարության և անասնապահության զարգացումով բարձր եկամտաբերության ապահովում և արտագաղթի տեմպերի նվազում • <u>Տուֆաշեն</u>- Տուֆ քարի հանքավայրերի շահագործման ծավալների ավելացման և վերամշակման ճյուղի զարգացման միջոցով նոր աշխատատեղերի ստեղծում • <u>Հայրենյաց</u>- Գյուղում առկա պատմամշակութային արժեքների բազայի վրա տուրիզմի զարգացումը, ինչպես նաև զարկ տալով ինտենսիվ	թվով երիտասարդ ընտանիքների արտագաղթը քաղաքներ, բնական տարերային աղետները • <u>Հոռոմ</u>- Արտագաղթը, բնական աղետները, գործազրկության բարձր մակարդակը, երիտասարդ ընտանիքների արտահոսքը գյուղից, զարնանային հեղեղումների վտանգ • <u>Անուշավան</u>- Մեյսմիկ գոտում գտնվելը, բնական տարերային աղետները, արտագաղթը դեպի քաղաքներ և արտերկիր • <u>Հառիճ</u>- Բնական տարերային աղետները, արտագաղթը, հեղեղումների վտանգը, շինարարական և կենցաղային աղբի աղտոտվածություն • <u>Լուսակերտ</u>- Մեյսմիկ գոտում գտնվելը, երիտասարդ ընտանիքների արտագաղթը, բնական աղետները • <u>Հայկասար</u>- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը, կոյուղաջրերի համակարգի բացակայությունը, ուժեղ սեյսմիկ գոտում գտնվելը • <u>Տուֆաշեն</u> - Արտագաղթը, բնական աղետները, գործազրկության բարձր մակարդակը, երիտասարդ ընտանիքների արտահոսքը գյուղից • <u>Հայրենյաց</u>- Երաշտ, կարկտահարություն,
---	---



գյուղատնտեսության զարգացմանն ու անասնապահությանակի ավելացումով ապահովել կայուն եկամուտ և կրճատել արտագաղթի ավելացող տեմպը • <u>Գետափ</u>- Գյուղում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը, և արտագաղթի ծավալների կրճատմանը • <u>Փոքր Մանթաշ</u> – Ջրային ռեսուրսների ճիշտ օգտագործման միջոցով դաշտավարության և անասնապահության ճյուղերի զարգացում: Գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնմամբ կստեղծվեն նոր աշխատատեղեր <u>Մեղրաշեն</u> - Գյուղում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը, եղած ռեսուրսների ճիշտ կառավարման միջոցով ֆերմերային տնտեսությունների եկամտաբերության ավելացում <u>Սպանդարյան</u>- Գյուղի տարածքում նպաստել տնտեսության տարբեր ճյուղերի (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) զարգացմանը՝ օգտվելով գյուղում պատմամշակութային և այլ արժեքների առկայությունից, գյուղի վարչական տարածքում զարկ տալ ջերմոցների ստեղծմանը՝ նպաստելով գյուղատնտեսության զարգացմանը <u>Նահապետավան</u> - Գյուղում ստեղծել լուրջ նախադրյալներ և նպաստավոր պայմաններ ժողովրդագրական աճի, սոցիալ-տնտեսական և տեղական ժողովրդավարության զարգացման համար՝ հիմնելով նոր աշխատատեղեր, ավելացնելով ընտանիքների եկամուտները և բարձրացնելով բնակչության ընդհանուր կենսամակարդակը, հաղթահարելով աղքատությունը և կանխելով արտագաղթը • <u>Արևշատ</u> - Արագած լեռան ստորոտների ջրային պաշարների բազայի վրա ինքնահոս եղանակով ռոռզման նոր համակարգի կառուցումը,	ցրտահարություն, ուժեղ քամիներ, արտագաղթը, աշխատատեղերի խիստ պակասը, գործազրկության բարձր մակարդակը • <u>Գետափ</u> - Երիտասարդ ընտանիքների արտագաղթը, բնական աղետները, գործազրկության բարձր մակարդակը, երիտասարդ ընտանիքների արտահոսքը գյուղից • <u>Փոքր Մանթաշ</u> - Ջրամբարի պատնեշի հնարավոր փլուզման տեխնածին վտանգը, երիտասարդ ընտանիքների արտագաղթը, բնական աղետները, գործազրկության բարձր մակարդակը • <u>Մեղրաշեն</u>- Ստացված բերքի ոչ շահավետ իրացումը գյուղացիների կողմից, ոչ բարենպաստ բնակլիմայական պայմաններ՝ կարկտահարության և երաշտի վտանգ • <u>Սպանդարյան</u>- Խմելու ջրի ջրամատակարարման բաց ավազանների առկայության պատճառով համայնքում սուր վարակիչ հիվանդությունների առաջացման վտանգը, աղբավայրի բացակայությունը, ռոռզման համակարգի անմխիթար վիճակը • <u>Նահապետավան</u>- Աշխատատեղերի բացակայության պատճառով գյուղի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է գյուղի կենսագործունեությունը • <u>Արևշատ</u>- Համայնքում հողագործությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը վտանգում է
---	---



գյուղատնտեսության ոլորտի զարգացումը: Գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնմամբ կստեղծվեն նոր աշխատատեղեր • Մեծ Սանթա2 - Գյուղի տարածքում նպաստել տնտեսության տարբեր ճյուղերի (հատկապես գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) զարգացմանը՝ օգտվելով գյուղում պատմամշակութային և այլ արժեքների առկայությունից	գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացումը • Մեծ Սանթա2 - Արտագաղթը, բնական աղետները, գործազրկության բարձր մակարդակը, երիտասարդ ընտանիքների արտահոսքը գյուղից
--	---

3 Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1 Համայնքի զարգացման տեսլականը

Համայնքի տեսլականը՝

Արթիկ համայնքը մաքուր, բարեկարգ և զարգացող բազմաբնակավայր է, որն ունի բնակչության համար բավարար կենսապայմաններ և որտեղ մատուցվում են հանրային բոլոր ծառայությունները:



Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար **համայնքի ռազմավարությունն է՝**

- ապահովել համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի աստիճանական ինտեգրումը և համաչափ զարգացումը՝ չխորացնելով նրանց միջև առկա տարբերությունները և զարգացման անհամաչափությունները,
- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնազլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- համայնքում կաթի, մսի, բրդի հանձնման և վերամշակման արտադրամասերի ստեղծում և գործարկում,
- համայնքում մեղվապահության ընդլայնում և էկոլոգիապես մաքուր մեղրի արտադրության աստիճանական զարգացում,



- համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
- միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում, ջրահեռացման և արտաքին լուսավորության համակարգերի անցկացում, ճանապարհային նշանների տեղադրում,
- համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների աստիճանական բարելավում՝ մատուցվող հանրային ծառայությունների տեսակների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական կրթություն, արտադպրոցական դաստիարակություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի ընդլայնման, հասանելիության ու մատչելիության ապահովման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
- համայնքի ՏԻՄ-երի, աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունների աստիճանական հզորացում, տեղական ժողովրդավարության ամրապնդում, համայնքում պատշաճ կառավարման սկզբունքների հետևողական իրականացում,
- ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակների հետևողական բարձրացում,
- համայնքի ֆինանսական կառավարման համակարգում հստակ մեխանիզմների, գործիքների ներդրում և հետևողական կիրառում,
 - նոր աշխատատեղերի ստեղծում և համայնքից միգրացիայի նվազեցում, բնակչության թվաքանակի կայունացում:

Համայնքի 2022-2026թթ. հնգամյա զարգացման ծրագրի հիմնական նպատակներն են՝

- համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, թռչնապահության, մեղվապահության) աստիճանական զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- համայնքի միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում և լուսավորում,
- համայնքի կենտրոնի հետ բոլոր բնակավայրերի հասարակական տրանսպորտի գործունեության ապահովում,



- համայնքի բնակավայրերում նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ոլորտներում ենթակառուցվածքների ընդլայնում և բարելավում,
- համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ բնակելի շենքերի ու առանձնատների գազաֆիկացման, խմելու և տեխնիկական ջրի ջրամատակարարման արտաքին և ներբնակավայրային համակարգերի նորոգման և շահագործման, աղբահանության և սանիտարական ծառայությունների կազմակերպման և մատուցման ճանապարհով,
- համայնքի դպրոցական հանրակրթության պայմանների բարելավում,
- բնակչությանը հանրային ծառայություններ մատուցող համայնքային հիմնական ենթակառուցվածքների (բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերի, մանկապարտեզների, մշակույթի տների և ակումբների, գրադարանների, բուժկետերի) շենքերի հիմնանորոգում կամ վերակառուցում,
- համայնքի գործարար միջավայրի բարելավում և տնտեսական զարգացում՝ նոր աշխատատեղեր ստեղծող անհատ ձեռներեցներին և կազմակերպություններին խրախուսելու (օրինակ, հողհատկացման, տեղական հարկերի, տուրքերի և վճարների գծով արտոնություններ տրամադրելու) միջոցով,
- ակտիվացնել համայնքի համագործակցությունը պետության, միջազգային և տեղական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի հետ՝ համայնքային տնտեսությունում լրացուցիչ ներդրումներ ապահովելու նպատակով:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները և դրանց թիրախային արժեքները բերված են **աղյուսակ 14-ում**:



Աղյուսակ 14. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	2022թ.		2023թ.		2024թ.		2025թ.		2026թ.	
	Ելակետային արժեք	Թիրախային արժեք	Ելակետային արժեք	Թիրախային արժեք	Ելակետային արժեք	Թիրախային արժեք	Ելակետային արժեք	Թիրախային արժեք	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	35	34	34	33	33	32	32	31	31	30
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	31,1	32,5	32,5	33,3	33,3	34.6	34,6	35.7	35,8	35,8
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	53206	53456	53456	53706	53706	53956	53956	54206	54206	34500



3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

Ստորև սահմանված են համայնքի ոլորտային նպատակները՝ ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունների առանձին բնագավառների (ոլորտների):

Աղյուսակ 15. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք, 2022թ.	Թիրախային արժեք, 2022-2026թթ.
Ոլորտ 1. Ընդհանուր			
Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների հասանելիությունը և մատչելիությունը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի, ՀՈԱԿ-ների կողմից մատուցված հանրային ծառայությունների հասանելիությունից և մատչելիությունից, %	15	2022թ.՝ 25,5 2023թ.՝ 25,5 2024թ.՝ 25,5 2025թ.՝ 25,5 2026թ.՝ 25,5
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, %	21,2	2022թ.՝ 25.5 2023թ.՝ 26.78 2024թ.՝ 28.12 2025թ.՝ 29.53 2026թ.՝ 31.1
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
Նպաստել երկրի պաշտպանունակության մակարդակի բարձրացմանը:	Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների գրանցամատյանի	այո	2022-26թթ.՝ այո



	վարումը, այո/ ոչ		
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
Բարելավել համայնքի բնակչության քաղաքացիական պաշտպանության կազմակերպման մակարդակը և իրականացնել արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ:	Արտակարգ իրավիճակների ժամանակ համայնքի բնակչության քաղաքացիական պաշտպանության կազմակերպման ուժերի պատրաստվածության մակարդակը	բավարար	բավարար
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
Բարելավել քաղաքաշինության և կոմունալ ծառայության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը:	Նորոգված տանիքներ ունեցող բազմաբնակարան շենքերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, %	12	2022թ.՝ 17 2023թ.՝ 22 2024թ.՝ 27 2025թ.՝ 32 2026թ.՝ 37
	Գիշերային լուսավորված փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, %	30	2022թ.՝ 20 2023թ.՝ 22 2024թ.՝ 24 2025թ.՝ 27 2026թ.՝ 33
Ոլորտ 5. Հողօգտագործում			
Բարձրացնել համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետությունը:	Համայնքի սեփականություն հանդիսացող վարձակալության տրված հողերի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, %	88	2022թ.՝ 10 2023թ.՝ 10 2024թ.՝ 10 2025թ.՝ 12 2026թ.՝ 12
	Համայնքի սեփականություն հանդիսացող օտարված հողակտորների մակերեսը, հա	25,72	2022թ.՝ 3,72 2023թ.՝ 4 2024թ.՝ 5 2025թ.՝ 6 2026թ.՝ 7



Ոլորտ 6. Տրանսպորտ			
Բարձրացնել համայնքային ենթակայության ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը և ապահովել ճանապարհային անվտանգ երթևեկությունը:	Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների և փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, %	40	2022թ.՝ 43 2023թ.՝ 47 2024թ.՝ 52 2025թ.՝ 55 2026թ.՝ 60
	Կապիտալ նորոգված ներհամայնքային ճանապարհների և փողոցների մակերեսը, քմ	145,87	2022թ.՝ 10 2023թ.՝ 15 2024թ.՝ 20 2025թ.՝ 25 2026թ.՝ 30
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ			
Խթանել համայնքում գործարար միջավայրի բարելավումը ու զարգացումը:	Համայնքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների (ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների) թիվը	146	2022թ.՝ 7 2023թ.՝ 12 2024թ.՝ 18 2025թ.՝ 23 2026թ.՝ 28
Ոլորտ 8. Կրթություն			
Ապահովել համայնքի բնակչության նախադպրոցական կրթության արտադպրոցական դաստիարակության որակյալ ծառայությունների մատուցումը:	Անհրաժեշտ շենքային պայմաններով ապահովված մանկապարտեզների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ, %	33	2022թ.՝ 45 2023թ.՝ 50 2024թ.՝ 55 2025թ.՝ 60 2026թ.՝ 65
	Տարվա ընթացքում մատուցված նախադպրոցական կրթության ծառայության արժեքը մեկ երեխայի հաշվով, հազ.դրամ	30.0	2022թ.՝ 31.0 2023թ.՝ 32.0 2024թ.՝ 33.0 2025թ.՝ 34.0 2026թ.՝ 35.0
	Անհրաժեշտ շենքային պայմաններով ապահովված արտադպրոցական դաստիարակության խմբակների տեսակար կշիռը դրանց ընդհանուր թվի մեջ,%	30	2022թ.՝ 40 2023թ.՝ 45 2024թ.՝ 50 2025թ.՝ 55 2026թ.՝ 60



Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
Կազմակերպել համայնքի մշակութային կյանքը և ապահովել որակյալ ծառայությունների մատուցումը:	Տարվա ընթացքում գրադարանի ծառայություններից օգտված բնակիչների թվի տեսակարար կշիռը բնակիչների ընդհանուր թվի մեջ, %	11	2022թ.՝ 11 2023թ.՝ 11.5 2024թ.՝ 12 2025թ.՝ 12.5 2026թ.՝ 13
	Մատուցված մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	35	2022թ.՝ 40 2023թ.՝ 45 2024թ.՝ 50 2025թ.՝ 55 2026թ.՝ 60
Ոլորտ 10. Առողջապահություն			
2022-2026թթ. ընթացքում ոլորտում նախատեսվում է բժշկական կենտրոնի նոր շենքի կառուցում ՀՀ կառավարության միջոցներով	Ավելանալու է նոր ծառայություններ հզորանալու է անձնակազմը, ավելանալու է մահճակալների թիվը հզորանալու է նյութատեխնիկական բազան		2022թ.՝ 2023թ.՝ 2024թ.՝ 2025թ.՝ 2026թ.՝
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
Բնակչության մոտ առողջ կենսակերպի գաղափարի արմատավորում, կյանքի բարենպաստ պայմանների ապահովում	Համայնքի ապահովվածությունը մարզադաշտերով և մարզադպրոցներով, խաղահրապարակներով,%	27	2022թ.՝ 66 2023թ.՝ 68 2024թ.՝ 70 2025թ.՝ 72 2026թ.՝ 74
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն			
Ապահովել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և մատչելիությունը:	Սոցիալական ծրագրերի առկայությունը, այո/ոչ	այո	2022-26թթ.՝ այո
	Սոցիալական ծրագրերի շահառուների բավարարվածությունը	բավարար	2022թ.՝ լավ



	իրականացված ծրագրերից (հարցումների հիման վրա), շատ վատ, վատ, բավարար, լավ, շատ լավ		
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն			
Ստեղծել գյուղատնտեսության զարգացման համար նպաստավոր պայմաններ, (Ժամանակակից տեխնոլոգիաներով հողերի ջրարբիացում և կաթիլային ոռոգման համակարգի տեղադրում, ինտենսիվ այգիների հիմնում)	Համայնքում առկա հակակարկտային կայանների թիվը	34	2022թ.՝ 0 2023թ.՝ 3 2024թ.՝ 2 2025թ.՝ 3 2026թ.՝ 4
Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա			
2022-2026թթ. ընթացքում ոլորտում նախատեսվում են կատարել կանաչապատման, ծառատունկ և սանիտարական էտ:		33	2022թ.՝ 8 2023թ.՝ 11 2024թ.՝ 12 2025թ.՝ 15 2026թ.՝ 20
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն			
Ապահովել համայնքի բնակավայրերում բնակչությանը աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի մաքրությունը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններից (հարցումների հիման վրա)	բավարար	2022թ.՝ բավարար 2023թ.՝ բավարար 2024թ.՝ լավ 2025թ.՝ լավ 2026թ.՝ լավ
	Տեղափոխված աղբի ծավալը, տոննա	9208	2022թ.՝ 9208 2023թ.՝ 9484 2024թ.՝ 9768 2025թ.՝ 10 061 2026թ.՝ 10 663
	Սանիտարական մաքրման ենթարկված տարածքների մակերեսի տեսակարար կշիռը սանիտարական մաքրման	2	2022թ.՝ 2 2023թ.՝ 3 2024թ.՝ 4 2025թ.՝ 4



	Էնթալպիա տարածքների ընդհանուր մակերեսի մեջ, %		2026թ.՝ 6
Ոլորտ 16. Զբոսաշրջություն			
Խթանել համայնքում զբոսաշրջության զարգացումը:	Համայնք այցելած զբոսաշրջիկների թվի աճը նախորդ տարվա համեմատ, %	3	2022թ.՝ 3 2023թ.՝ 4 2024թ.՝ 5 2025թ.՝ 7 2026թ.՝ 10
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			
Ապահովել տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակչության մասնակցությունը և ՏԻՄ-ի աշխատանքների թափանցիկության մակարդակի բարձրացումը:	Համայնքի բնակիչների մասնակցությամբ ՏԻՄ-երի (համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու) կողմից կայացված որոշումների թվի տեսակարար կշիռը կայացված որոշումների ընդհանուր թվի մեջ	30	2022թ.՝ 30 2023թ.՝ 33 2024թ.՝ 34 2025թ.՝ 35 2026թ.՝ 37

3.3 Համայնքի ՀՀԶԾ-ի ծրագրերի ցանկը (ըստ ոլորտների)

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման ռազմավարությունից, հիմնական նպատակներից և համայնքի բնակչության կողմից արված առաջարկություններից, քննարկվել և որոշվել է ՀՀԶԾ-ում ներառված ֆինանսապես ապահովված և չապահովված ծրագրերի ցանկերը (**աղյուսակ 16, աղյուսակ 17**):



Աղյուսակ 16. ՀՀԶԾ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	ԲԲՀ-ի բնակավայրը (Բաց բյուջեի հետազոտությունը)	Ծրագրի իրականացման տարեթիվը
Ոլորտ 1. Ընդհանուր				
1.	Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում	2964570.0	Բոլոր բնակավայրերում	2022-2026 թ.թ.
2.	ՔԿԱԳ տարածքային բաժնի պահպանման ծախսեր	19990.0	ք.Արթիկ	2022-2026 թ.թ.
Ընդամենը		2984560.0		
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում				
2022-26 թթ.-ին ոլորտում ֆինանսապես ապահովված ծրագրեր չեն նախատեսվել				
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում				
1.	Հեղեղատարի մաքրման աշխատանքների իրականացում	33150.0	ք. Արթիկ գ. Նոր Կյանք գ. Վարդաքար գ. Հոռոմ գ. Մեծ Մանթաշ գ. Փոքր Մանթաշ	2022-2026 թ.թ.
Ընդամենը		33150.0		
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն				
1.	Ջրամատակարարման համակարգերի ընթացիկ նորոգում և սպասարկում	155545.0	գ. Արևշատ, գ. Գեղանիստ, գ. Լեռնակերտ, գ. Հառիճ, գ. Մեծ Մանթաշ գ. Նահապետավան գ. Պեմզաշեն	2022-2026 թ.թ.



			գ. Սարալանջ գ. Փոքր Մանթաշ	
2.	Ներքին ցանցի գազատարերի անցկացում	116460.2	գ. Մեծ Մանթաշ գ. Փոքր Մանթաշ գ. Արևշատ գ. Գեղանիստ գ. Լեռնակերտ գ. Պեմզաշեն գ. Հայրենյաց գ. Հոռոմ	2022-2026 թ.թ.
3.	Արթիկում կոյուղագծի անցկացում	70000.0	ք.Արթիկ	2022-2026թ.թ.
4.	Կոյուղագծի մաքրում	10000.0	գ. Լեռնակերտ գ. Պեմզաշեն	2022-2026թ.թ.
5.	Արթիկի բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում	400000.0	ք.Արթիկ	2022-2026թ.թ.
6.	Փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացում, ընդլայնում և սպասարկում	300000.0	Բոլոր բնակավայրերում	2022-2026 թ.թ.
Ընդամենը		1052005.2		
Ոլորտ 5. Հողօգտագործում				
2022-26 թթ.-ին ոլորտում ֆինանսապես ապահովված ծրագրեր չեն նախատեսվել				
Ոլորտ 6. Տրանսպորտ				
1.	Համայնքային ենթակայության ճանապարհների վերանորոգում, գյուղերի ներհամայնքային և գյուղ մտնող ճանապարհների վերանորոգում և ասֆալտապատում, ճանապարհային գծանշում և ճանապարհային նշանների տեղադրում	1517000.0	Բոլոր բնակավայրերում	2022-2026 թ.թ.
2.	Ուղևորափոխադրող մեքենայի ձեռքբերում	20000.0	ք. Արթիկ	2022-2026 թ.թ.
Ընդամենը		1537000.0		
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ				
2022-26 թթ.-ին ոլորտում ֆինանսապես ապահովված ծրագրեր չեն նախատեսվել				
Ոլորտ 8. Կրթություն				



1.	Նախադպրոցական կրթության ծառայության մատուցում	1940800.0	Բոլոր բնակավայրերում	2022-2026 թ.թ.
2.	Արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցում	1187600.0	Բոլոր բնակավայրերում	2022-2026 թ.թ.
3.	Նախակրթարանի գործունեության կազմակերպում	90000.0	գ. Մեղրաշեն գ. Արևշատ գ. Հայկասար գ. Նահապետական գ. Լուսակերտ գ. Գետափ գ. Հայրենյաց գ. Տուֆաշեն գ. Սարալանջ	2022-2026 թ.թ.
4.	Մանկապարտեզների շենքի վերանորոգում	550000.0	Ք. Արթիկ, գ. Լեռնակերտ գ. Հոռում գ. Փանիկ գ. Փոքր Մանթաշ	2022-2026 թ.թ.
Ընդամենը		3768400.0		
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ				
1.	Մշակութային ծառայությունների մատուցում, երիտասարդության ազատ ժամանցի կազմակերպում	715595.0	Բոլոր բնակավայրերում	2022-2026 թ.թ.
